ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

2004թ.

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մաս I

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ……………………………………...………3

Մաս II

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆՐԱ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 2004թ…………………………………………..……..…..…......8

Հավելված 1

2000թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԵՐԿԱ
ԸՆԹԱՑՔԸ ………………………………………............................…………...…17

Հավելված 2

2000թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ…………………………………..…35

## Մաս I ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀՀ կառավարության, ինչպես նաև Գործարարության աջակցման խորհրդի ջանքերով Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրը, որի որակը հանդիսանում է աշխատատեղեր ստեղծելու և ներդրումներ ներգրավելու հիմնական գործոնը, վերջին տարիներին բավականին բարելավվել է: Երկրի գործարար միջավայրի բարելավման առավել վճռական քայլերը, կարելի է ասել, սկսվեցին 2000-2001թթ. և ինչպես նաև վկայում են մի շարք միջազգային հեղինակավոր կազմակերպությունների ուսումնասիրությունները ու շուրջ 250-300 հայկական ձեռնարկություններում իրականացված հարցման արդյունքները ակնհայտ է,: Այսպես, ըստ “Heritage Foundation”-ի կողմից կազմվող տնտեսական ազատականության ցուցանիշում 2000թ. Հայաստանը 84-րդ տեղից բարձրացավ մինչև 44-րդ տեղը՝ 2004թ., 2.63 ցուցանիշով 3.12-ի դիմաց: 2001թ. սկսած Գործարարության աջակցման խորհուրդը ձեռնամուխ եղավ տնտեսության և գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող խնդիրների բացահայտմանը, պրոբլեմների բանկի ձևավորման և դրանց հետևողական լուծման աշխատանքներին: Հատկապես պետք է ընդգծել ՀՀ կառավարության՝ երկրի գործարար և ներդրումային միջավայրի զարգացման խոչընդոտները լայն սպեկտրով և ամբողջ խորությամբ ու խստությամբ տեսնելու, դրանցից չխուսափելու վճռականությունը, որի արդյունքն էր ՀՀ կառավարության նախաձեռնությամբ և ԳԱԽ-ի մասնակցությամբ 2000թ. սկսած Համաշխարհային Բանկի Երևանյան գրասենյակի աջակցմամբ հայկական շուրջ 250-300 ձեռնարկություններում գործարար միջավայրի որակի վերաբերյալ ուսումնասիրությունների պարբերաբար անցկացումը: Գործարարության աջակցման խորհրդի ուժերով կազմված «պրոբլեմների բանկից» և վերը նշված ուսումնասիրությամբ 2001թ. վեր հանվեցին երկրի տնտեսության տարբեր ոլորտները ընդգրկող գործարարությանը խոչընդոտող շուրջ 90 խնդիրներ: Ինչպես վկայում է Համաշխարհային Բանկի և Օտարերկրյա Ներդրումների խորհրդատվական ծառայության միջազգային ֆինանսական կորպորացիայի համատեղ ծառայության (ՕՆԽԾ) 2004թ. Հայաստանում անցկացված ուսումնասիրության արդյունքները, մինչև 2004թ. վերը նշված խնդիրներից շուրջ 95%-ը իրենց լուծումն են ստացել և մնացածի իրականացումն էլ այժմ ընթացքի մեջ է (**տես հավելված** 1):

2003-2004թթ. իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության սկսման և իրականացման, այսինքն՝ գործունեության գրանցման, լիցենզավորման, շինարարական և շահագործման թույլտվության ձեռքբերման, սերտիֆիկացման, հարկային և մաքսային վարչարարության վերահսկման և այլ առնչվող ոլորտներում տեղի են ունեցել էական բարելավումներ: Մասնավորապես՝ ձեռնարկության ֆիրմային անվանման և ապրանքանիշի գրանցումն արդեն իրականացվում է մեկ մարմնի՝ պետական ռեգիստրի կողմից, ինչը նպաստել է ընկերության պետական գրանցման համար ծախսվող ժամանակի և արժեքի կրճատմանը: Այսպես, ընկերությունների պետական գրանցման միջին ժամկետը կրճատվել է 2000թ.՝ 27.3 օրից, 2001թ.՝ 21.1 օրից, 2002թ՝ 15.6 օրից մինչև 14.5 օր՝ 2003թ-ին: Ի լրումն նշենք, որ պետական գրանցման համար կատարվող ընդհանուր ծախսերը կրճատվել են 2000թ.՝ 109 ԱՄՆ դոլարին համարժեք դրամից, 2001թ.՝ 92 ԱՄՆ դոլարից, 2002թ.՝ 88 ԱՄՆ դոլարից մինչև 75 ԱՄՆ դոլար՝ 2003թ-ին:

Բացի այդ, ինչպես վկայում է հետազոտության տվյալները, նկատվում է ձեռնարկատիրության գործունեության լիցենզավորման գործընթացի ընդհանուր ծավալի կրճատումը: Ընդհանուր առմամբ միջին ծախսերը կրճատվել են 2002թ. 660 ԱՄՆ դոլարից մինչև 361 ԱՄՆ դոլար 2003թ-ին: Նույնը նկատվել է նաև շինարարական թույլատվության ձեռքբերման դեպքում՝ 410 ԱՄՆ դոլարից 2002թ. մինչև 294 ԱՄՆ դոլար 2003թ-ին: Նվազել է նաև ստուգումների և վերահսկման հետ կապված ծախսերը՝ 2443,4 ԱՄՆ դոլարից 2002թ. ծախսերը իջել են մինչև 1280,6 ԱՄՆ դոլար 2003թ-ին:

Հայաստանում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման նկատմամբ առանցքային ուշադրության մասին է վկայում նաև այն փաստը, որ ՀՀ կառավարության

2003թ. օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում», որպես երկրում աղքատության կրճատման կարևորագույն գործոններից մեկը, մեծ և հանգամանալից բաժին է նվիրված Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրներին: Վերը նշված մտահոգության մասին է վկայում նաև ՀՀ կառավարության կողմից 2004թ. սեպտեմբերի 30-ի N 1380-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության մասնավոր հատվածում մրցակցության ուժեղացման և գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը», որում արտացոլված են գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ և դրանց մի մասը փաստվել է նաև անկախ փորձագետների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով: 2000թ. սկսած երկրի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման հիմնական ձեռքբերումները (ըստ Օտարերկյա ներդրումների խորհրդատվական ծառայության (ՕՆԽԾ) ուսումնասիրության արդյունքների), բերված են **հավելված 2-ում**:

ՀՀ կառավարության և ԳԱԽ-ի գործադրած ջանքերի արդյունքները գործարարության զարգացման գործում առավել տեսանելի և ընկալելի են դառնում, երբ համեմատվում է Հայաստանի գործարար միջավայրի որակը բնութագրող ցուցանիշները մեր տարածաշրջանի երկրների և առավել զարգացած և լավագույն փորձ ունեցող երկրների համանման ցուցանիշների հետ: Նման վերլուծություն մեզ մատուցում է Համաշխարհային Բանկի մոնիտորինգի վերլուծությունների և քաղաքականության գրասենյակի ներդրումային միջավայրի վարչության 2004թ. իրականացրած «Բիզնեսով զբաղվելը 2005թ-ին՝ աճի խոչընդոտների վերացում (Doing Business in 2005. Removing Obstacles to Growth)» տարեկան 2-րդ զեկույցը: Ըստ զեկույցի հեղինակների, թեև մակրոքաղաքականությունը չափազանց կարևոր է համարվում, սակայն մի շարք երկրներ մեծ հաջողությունների են հասել, երբ բարեկեցության հասնելու և աղքատության կրճատման ճանապարհին կառավարության կողմից շատ մեծ ուշադրություն են դարձրել գործարարության կանոնակարգման որակը բարձրացնելու և այդ կանոնակարգերը կիրարկող ինստիտուտները կատարելագործելու խնդիրներին: Ըստ վերը նշված տարեկան զեկույցի «Բիզնեսով զբաղվելը 2005թ-ին, Կովկասյան տարածաշրջանային պրոֆիլ» հատվածի, Հայաստանի գործարարության և ներդրումային միջավայրը բնութագրող մի շարք ցուցանիշները համեմատության մեջ է դրվել տարածաշրջանի երկրների և այդ ցուցանիշներից աշխարհում լավագույնս տիրապետող երկրների հետ, ինչպիսիք են՝ Ավստրալիան, Դանիան, Հոնկոնգը, Նոր Զելանդիան, Նորվեգիան, Սաուդյան Արաբիան, Միացյալ Նահանգները, Իռլանդիան, Ճապոնիան և այլն: Ըստ զեկույցի Հայաստանը գործարարության որակի և ներդրումային միջավայրը բնութագրող մի շարք ցուցանիշներով բավականին առաջ է անցել տարածաշրջանի մի շարք երկրների համեմատ, ինչպիսիք են՝ Թուրքիան, Վրաստանը, Ռուսաստանը, Ադրբեջանը, Լատվիան և այլն: Օրինակ, «Բիզնես սկսելու ծախսերը», «Բիզնես սկսելու համար ժամանակը», «Գույքի գրանցման համար պահանջվող ժամանակահատվածը», «Գույքի գրանցման ծախսերը», «Աշխատանքային կանոնակարգերը», «Սնանկության գործընթացների համար պահանջվող ժամանակահատվածը», «Բիզնեսի վերականգնման գործընթացը» կոչվող ցուցանիշներով Հայաստանը համաշխարհային լավագույն երկրների ցուցանիշների համեմատ տարածաշրջանում գտնվում է երկրորդից երրորդ տեղերում և առաջ է իր հարևան բոլոր երկրներից:

Այնուամենայնիվ, չնայած ակնհայտ ձեռքբերումներին, Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրը դեռևս էական բարելավման կարիք ունի, որը պարզ է դառնում, երբ Հայաստանը համեմատվում է Եվրամիության անդամակցության թեկնածու Եվրոպական անցումային երկրների հետ (տես 2002թ. Transition Report, EBRD, 2003):

Արդի փուլում ՀՀ կառավարության և ԳԱԽ-ի առջև ծառացած են լուծման ենթակա առավել բարդ և համակարգային հիմնարար խնդիրներ:

2004թ. կարելի է համարել երկրի գործարար և ներդրումային միջավայրի բարելավման՝ իր նշանակությամբ առավել խորքային գործընթացների սկսման, խոչընդոտների բացահայտման և դրանց լայնածավալ քննարկումների ու միջոցառումների անցկացման երկրորդ փուլի սկիզբը:

ՀՀ կառավարության միջնորդությամբ և ԳԱԽ-ի համակարգմամբ 2003-2004թթ. ՕՆԽԾ-ի կողմից շուրջ 300 ձեռնարկություններում հարցումների միջոցով

ուսումնասիրության արդյունքները բացահայտել են մի շարք ոլորտներ (անկախ փորձագիտական գնահատական, որոնք այժմ գտնվում են լայն քննարկումների փուլում), որտեղ դեռևս առկա են գործարարության զարգացմանը խոչընդոտող խնդիրներ: Ներքոհիշյալ աղյուսակում բերվում են այդ ոլորտները, որոնք գնահատվում են 1-4 բալային սանդղակով, (որտեղ 1-ը նշանակում է խոչընդոտների բացակայություն, 2-ը՝ աննշան խոչընդոտ, 3-ը՝ միջին խոչընդոտ և 4-ը՝ լուրջ խոչընդոտ):

*Աղյուսակ 1.*

*Հայաստանում գործարարության և ներդրումային միջավայրի խոչընդոտների գնահատում 2003-2004թթ. (ըստ ՕՆԽԾ ուսումնասիրության)*

| Կանոնակարգիչ կամ պետական ծառայության ոլորտ | %* | Միջին գնահատական |
|---|---|---|
| Հարկեր և հարկային վարչարարություն | 83.7 | 3.26 |
| Քաղաքականության անկայունություն/անորոշություն | 76.0 | 2.93 |
| Ենթակառուցվածք (հեռախոս, էլեկտրականություն, ջուր, ճանապարհներ, հող) | 74.0 | 2.95 |
| Ֆինանսավորում | 69.7 | 2.93 |
| Կոռուպցիա | 66.4 | 2.84 |
| Բարձր հարկային տոկոսադրույքներ | 59.4 | 2.70 |
| Կառավարության կամ մասնավոր ընկերությունների կողմից հակամրցակցային գործունեություն | 55.6 | 2.54 |
| Դատական համակարգի գործունակություն | 53.3 | 2.33 |
| Գների անկայունություն/սղաճ | 41.0 | 2.31 |
| Կառավարության քաղաքականության բարդություն, թափանցիկության բացակայություն | 37.0 | 1.99 |
| Տարադրամի փոխարժեք | 34.7 | 2.03 |
| Փաստաթղթային պահանջագրեր (հաշվապահական ձև, և այլն) | 29.4 | 1.90 |
| Մաքսեր/արտաքին առևտրի կանոնակարգ | 27.3 | 1.43 |

* ձեռնարկությունների %-ը, որոնք գնահատում են համապատասխան ոլորտը որպես միջին կամ գլխավոր խոչընդոտ իրենց գործունեության աճի համար:

Ինչպես երևում է ուսումնասիրության արդյունքներից, գործարարության զարգացման ներկա փուլում նրա աճի վրա ազդող ամենամեծ գործոններն են համարվում հարկային վարչարարությունը, հարկերը և այն կարգավորող կանոնակարգերը, տնտեսական քաղաքականության կանոնակարգերի անկայունությունը և անորոշությունը, տնտեսական և ֆինանսական կանոնակարգերի փոփոխման անկանխատեսելիությունը, դրանց փոփոխությունների նախօրոք տեղեկացվածության աստիճանը, երկրի ենթակառուցվածքների զարգացման աստիճանը, որը ներառում է հեռահաղորդակցությունը, տրանսպորտը, ջրամատակարարումը, ճանապարհների վիճակը, հողի արկայությունը և այլն, ֆինանսավորումը (անպատշաճ վարկային և ֆինանսական տեղեկությունը, ի դեպ որի լուծման ուղղությամբ արդեն որոշակի քայլեր ձեռնարկվել են վարկային բյուրոյի ստեղծմամբ, բանկերի ֆինանսական կառույցների գրավային պահանջները, գոյություն ունեցող վարկային պատմության դեպքում առանց գրավի վարկերի ստացման հնարավորությունը և բարձր տոկոսադրույքները), ինչպես նաև կոռուպցիան:

Նշված ոլորտների տարրողունակության աստիճանից ելնելով, ԳԱԽ-ը խնդիր է դրել մշակել և ՀՀ կառավարության միջոցով իրականացնել գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիր, որն էլ հանդիսանալու է ԳԱԽ-ի 2005թ. գործունեության առանցքային բաղադրիչներից մեկը: Վերոհիշյալ միջոցառումների իրականացումը հետագայում ենթադրում են այնպիսի կարևորագույն խնդիրների լուծում, ինչպիսիք են մասնավորապես.

- Մինչև հարկային և մաքսային օրենսդրության մեջ փոփոխություններ իրականացնելը դրանց նախագծերի գործարար և հասարակական այլ կազմակերպությունների մասնակցությամբ քննարկումների անցկացում;

- ընկերությունների տնտեսական գործունեության գրանցման տարբեր մարմինների կողմից հաշվառման ընթացակարգերի միասնականացում, ընկերությունների էլեկտրոնային գրանցման համակարգի ներդրման իրավական դաշտի մշակում;
- հողի ձեռքբերման ընթացակարգերի մատչելիության ապահովում;
- շինարարության թույլտվությունների և նախագծերի հաստատման ընթացակարգերի պարզեցում և մատչելիություն;
- նոր ընկերությունների մուտքի խրախուսում և նոր բիզնեսի ֆինանսավորման արդյունավետ սխեմաների մշակում և ներդրում;
- ֆինանսական միջոցների մատչելիության ապահովում;
- հարկման դրույքաչափերի բարձրացումից հնարավորինս խուսափում;
- հարկային և մաքսային վարչարարության կատարելագործում, այդ մարմինների և տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունների որակական բարելավում;
- հարկային (մաքսային) օրենսդրության պարզեցում և օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության գործուն մեխանիզմների զարգացում;
- հարկային վարչարարության արդյունավետության զարգացում, ստվերայնության կրճատում;
- հարկային համակարգի հետագա պարզեցում, օրենքների համախմբում միասնական սկզբունքով հարկային օրենսգրքում;
- հանրային ծառայություններ մատուցող ենթակառուցվածքների ֆինանսական ծրագրերով վերականգնման միջոցառումների իրականացում;
- արտահանողներին ավելացված արժեքի հարկի փոխհատուցման կանոնակարգերի հստակ և ժամանակին կիրարկում;
- արտահանողների կողմից ծագման երկրի վկայականի ձեռքբերման ընթացակարգերի պարզեցումը և դրանց դիմաց վճարումների տարբերակումը;
- մաքսային մարմինների ինքնահայտարարագրման համակարգի ներդրում և բոլոր ներմուծողների և մաքսային միջնորդների (բրոքերների) վրա ուղղակի առևտրի համակարգի տարածում;
- աշխատանքային հարաբերությունների կանոնակարգում, աշխատանքային օրենսգրքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի ընդունում;
- ստուգումների կանոնակարգում և գործընթացների պարզեցում;
- տնտեսվարող սուբյեկտների լուծարման ընթացակարգերի պարզեցում, պետական տարբեր մարմինների այդ գործընթացի հետ կապված խնդիրների և վերահսկողության շրջանակների հստակեցում;
- հաշվապահական հաշվառման ամփոփ, միասնական համակարգի ներդրում և դրանցում հաճախակի փոփոխությունների բացառում;

  ինչպես նաև բազմաթիվ խնդիրներ, որոնք հնարավոր չէ շարադրել ներկա հաշվետվության համատեքստում:

Ինչպես նշվել է վերևում, 2004թ. ընթացքում ԳԱԽ-ի և նրա քարտուղարության գործունեության առանցքն է հանդիսացել գործարարության և ներդրումային միջավայրի արդի փուլի զարգացման խոչընդոտների վեր հանման, դրանց լայն քննարկումների կազմակերպման և միջոցառումների ծրագրերի մշակման նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Բացի վերը նշվածից, ԳԱԽ-ը 2004թ. ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձրել արտահանողների աջակցության, տվյալ գործընթացների կարգավորման բարենպաստ նորմատիվ ակտերի ստեղծմանը: ԳԱԽ-ի համառ և արդյունավետ աշխատանքի շնորհիվ 2004թ. ընթացքում իր լուծումը ստացավ արտահանման դեպքում ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման բարդ հիմնախնդրի կարգավորումը, որն ի դեպ հետազոտության արդյունքներով ճանաչվել է որպես գործարարության խոշոր խոչընդոտներից մեկը: ՀՀ կառավարության 02.12.04թ. թիվ 1923-Ն որոշմամբ ընդունվեց «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման, այդ գործարքների գծով վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման նոր կարգը»,

որն էականորեն պարզեցրել է վերոհիշյալ գործընթացը և 2005թ. նրա փաստացի կիրարկումը գտնվելու է խորհրդի անմիջական ուշադրության կենտրոնում:

2004թ. ընթացքում խորհուրդը ձեռնամուխ եղավ տնտեսության զարգացման ներկա փուլում տնտեսվարող սուբյեկտներից հավաքագրվող պետական վիճակագրական, այդ թվում նաև վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից պահանջվող հաշվետվությունների քանակի կրճատման, դրանց հոսքերի հստակեցման, տարբեր մարմինների կողմից միևնույն հաշվետվությունների հավաքագրման կրկնորդությունների բացառման, կիրառվող մեթոդաբանությունների միասնականացման, ինչպես նաև պետական կառավարման մարմինների միջև վիճակագրական տվյալների փոխանակման կարգավորման աշխատանքներին, որոնք վերջնական լուծումները կստանան 2005թ-ին:

2004թ. ընթացքում խորհուրդն անմասն չի մնացել նաև համապետական նշանակության ծրագրերի կազմման աշխատանքների աջակցությանը, հատկապես «Հազարամյակի զարգացման նպատակների» հայաստանյան ծրագրերի մշակմանը: Ներկայումս այդ աշխատանքներն ընթացքի մեջ են:

ԳԱԽ-ի աշխատանքների նկատմամբ վստահության և նրա կայացման արդյունքն է նաև այն իրողությունը, որ մի շարք խոշոր ընկերություններ պետական կառավարման մարմինների հետ իրենց ունեցած վեճերը ձգտում են լուծել ոչ թե ուղղակի առճակատման ճանապարհով, այլ ԳԱԽ-ի միջոցով՝ փոխադարձ փոխզիջման և արտադատարանական հաշտությունների միջոցով, ինչը շատ էական է գործարար աշխարհում պետական կառույցների նկատմամբ վստահության մտնոլորտի ձևավորման օժանդակման գործում:

Խորհրդի աշխատանքի արդյունավետությունն էր նաև պատճառը, որ բազմաթիվ գործարարներ, հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ 2004թ. ցանկություն էին հայտնել ընդգրկվելու խորհրդի աշխատանքներում, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության Նախագահի «գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին ՀՀ Նախագահի 08.06.2004թ. ՆՀ-104-Ա հրամանագրով ընդլայնվեց խորհրդի կազմը, նախկին 28 անդամից հասնելով 46-ի, որն էլ գործարար շրջանակներում կոչվեց «46-ի ակումբ»:

2004թ. ընթացքում Հայաստանում գործող մի շարք միջազգային կազմակերպություններ մեծ հետաքրքրություն էին ցուցաբերել անմիջականորեն մասնակցելու խորհրդի աշխատանքներին և խորհրդի 2004թ. նոյեմբերի 10-ի ԳԱԽ-ի նիստի որոշմամբ ընդգրկվեցին նրա մշտական գործող երեք աշխատանքային խմբերում:

Հարկ է նշել, որ խորհրդի աշխատանքները մեծապես ավելի արդյունավետ կլինեին, եթե խորհուրդը լիովին կարողանար ապահովել տնտեսական քաղաքականության տարբեր ոլորտների փոփոխությունների վերաբերյալ նախօրոք քննարկումներ խորհրդի և նրա աշխատանքային խմբերի շրջանակներում: Դա հնարավորություն կտար նախօրոք իրազեկել գործարար միջավայրին դրանց վերաբերյալ, ինչպես նաև բարելավել առաջարկվող փոփոխությունները: Խոսքը հատկապես վերաբերվում է ամենամյա բյուջետային քննարկումների գործընթացում արդեն ավանդույթ դարձած օրենսդրական փաթեթների ներկայացմանն ու քննարկմանը:

Խորհրդի գործունեությունը ցույց է տվել, որ այն բավական ազդեցություն ունի երկրի գործարար ներդրումային միջավայրի բարելավման գործում և ավելի մեծ դերակատարում ունենալու ներուժ ունի:

Հաշվետվության երկրորդ մասում տրված է ԳԱԽ-ի և նրա քարտուղարության 2004թ. կատարած աշխատանքների մանրամասն շարադրանքը:

## Մաս II ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆՐԱ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 2004թ.

Գործարարության աջակցման խորհուրդը (այսուհետ՝ ԳԱԽ) համաձայն ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 22-ի N 131 որոշմամբ հաստատված կանոնադրության, իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով և ընդունված որոշումներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում ՀՀ պետական կառավարման մարմինների քննարկմանը:

Գործարարության աջակցման խորհուրդը (այսուհետ՝ ԳԱԽ) իր ստեղծման պահից 2001թ.-ից մինչ այժմ գումարել է թվով 23 նիստ, որից 4-ը 2004թ. ընթացքում, որոնցում քննարկվել են բազմաբնույթ խնդիրներ, լուծումներ են ստացել ՀՀ պետական կառավարման մարմինների և մասնավոր ընկերությունների միջև ծագած մի շարք հարցեր, ինչպես նաև մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել գործարարության զարգացմանը բարենպաստ ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր:

2004 թվականը սկսվեց Գործարարության աջակցման խորհրդի առաջին նիստի նախապատրաստման աշխատանքներով: Հաշվի առնելով այն փաստը, որ առաջին երկու ամիսների ընթացքում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ վարչապետին՝ ԳԱԽ-ի քարտուղարությունը նույնպես ձեռնամուխ եղավ այդ աշխատանքներին, որի արդյունքում կազմվեց ԳԱԽ-ի 2003թ. գործունեության մանրամասն հաշվետվությունը /13 էջ/ և այն ներառվեց ԳԱԽ-ի առաջին նիստի օրակարգում:

Գործարարության աջակցման խորհրդի 2004թ. առաջին նիստը գումարվել է փետրվարի 17-ին, հետևյալ օրակարգով՝

1. ԳԱԽ-ի 22.10.2003թ. նիստի N 5 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:
2. Հայաստանի ոսկերչության և ակնագործության ոլորտում հարկային և մաքսային դաշտի բարելավմանն ուղղված առաջարկությունների քննարկում:
3. Գործարարության աջակցման խորհրդի 2003թ. գործունեության տարեկան հաշվետվության մասին:

**Նիստի քննարկման արդյունքում, ԳԱԽ-ի անդամների համաձայնությամբ, վարչապետի կողմից հանձնարարականներ են տրվել.**

Բավարար համարելով Գործարարության աջակցման խորհրդի (ԳԱԽ) 22.10.2003թ. նիստի N 5 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքը՝

ա) ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար պրն.՝ **Կ. Ճշմարիտյանին՝ մեկ ամսյա ժամկետում** ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ՀՀ արդարադատության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի, ինչպես նաև Հայաստանի ոսկեգործների և ադամանդագործների ասոցիացիայի հետ համատեղ կազմակերպել մասնագիտական քննարկումներ ասոցիացիայի առաջարկությունների շուրջ և ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստին ներկայացնել դրանց լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ առաջարկություններ, որոնք համահունչ կլինեն տնտեսական քաղաքականության ոլորտում ՀՀ կառավարության որդեգրած սկզբունքներին:

բ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար՝ պրն. **Վ. Խաչատրյանին,** ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ պրն.՝ **Ս. Մնացականյանի** (համաձայնությամբ), ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի նախագահ պրն.՝ **Է. Մուրադյանի** (համաձայնությամբ) և այլ շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համատեղ քննարկել տնտեսության զարգացման ներկա փուլում տնտեսվարող սուբյեկտներից հավաքագրվող պետական վիճակագրական, այդ թվում նաև վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից պահանջվող հաշվետվությունների քանակի կրճատման, դրանց հոսքերի

հստակեցման, տարբեր մարմինների կողմից միևնույն հաշվետվությունների հավաքագրման կրկնորդությունների բացառման, կիրառվող մեթոդաբանությունների միասնականացման, ինչպես նաև պետական կառավարման մարմինների միջև վիճակագրական տվյալների փոխանակման կարգավորման խնդիրները և ձեռք բերված համաձայնությունների վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ ներկայացնել ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստին:

գ) ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, ԳԱԽ-ի փոխնախագահ պրն.՝ **Վ. Ներսիսյանցին,** ԳԱԽ-ի քարտուղար պրն.՝ **Վ.Մովսիսյանին՝**

- ԳԱԽ-ի 2004 թվականի աշխատանքային գործունեության ծրագրի ձևավորման նպատակով խորհրդի «44-ի ակումբ»-ում և ԳԱԽ-ի գործարար համայնքը ներկայացնող անդամների շրջանակից ձևավորված մշտական գործող երեք աշխատանքային խմբերում քննարկել տնտեսության զարգացման ներկա փուլում գործարարությանը խոչընդոտող խնդիրները հայտնաբերելու և դրանցով «պրոբլեմների բանկը» համալրելու հարցերը:
- ԳԱԽ-ի «44-ի ակումբ»-ում կազմակերպել քննարկումներ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի կողմից Հայաստանի մասնավոր ընկերությունների վրա պետական պահանջմունքների, գործառույթների և ինստիտուցիոնալ կարգավորումների ազդեցությունը գնահատելու նպատակով իրականացված Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգիչ և վարչական ծախսերի **չորրորդ տարեկան հետազոտության** հաշվետվության շուրջ՝ նրանում արտացոլված խնդիրների շրջանակը ձևավորելու և ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստում քննարկում կազմակերպելու համար:
- ԳԱԽ-ի «44-ի ակումբ»-ում քննարկել աշխատանքային խմբերի միջև անդամների ռոտացիայի հարցերը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ ԳԱԽ-ի հաջորդ նիստին:

դ) Ի գիտություն ընդունելով ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 2003 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը՝

- **Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝ հնարավորինս սեղմ ժամկետում** ԳԱԽ-ի 2003թ.-ի գործունեության հաշվետվության փաստական նյութի, ինչպես նաև ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի կողմից իրականացված Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգիչ և վարչական ծախսերի չորրորդ տարեկան հետազոտության արդյունքների հիման վրա իրականացնել մանրամասն վերլուծություն երկրի գործարար միջավայրի կայացման, ներդրումային միջավայրի բարելավման, գործարարների շահերի պաշտպանության, օրենսդրական դաշտի բարեփոխման գործընթացում ԳԱԽ-ի 2003թ.-ի գործունեության ազդեցությունը գնահատելու և թերությունները բացահայտելու համար: Վերլուծության արդյունքները տրամադրել ԳԱԽ-ի անդամներին և զանգվածային լրատվության միջոցներին:

**Նիստից հետո ընկած ժամանակահատվածում տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ իրականացվել են հետևյալ գործընթացները.**

- ✓ Մանրամասն վերլուծություն է իրականացվել երկրի գործարար միջավայրի կայացման, ներդրումային միջավայրի բարելավման, գործարարների շահերի պաշտպանության, օրենսդրական դաշտի բարեփոխման գործընթացում՝ ԳԱԽ-ի 2003թ.-ի գործունեության ազդեցությունը գնահատելու և թերությունները բացահայտելու նպատակով: Վերլուծության արդյունքների հիման վրա կազմվել է հաշվետվություն, որը ներկայացվել է ԳԱԽ-ի անդամներին և զանգվածային լրատվության միջոցներին:

- ✓ Ի կատարումն Գործարարության աջակցման խորհրդի 2004թ. փետրվարի 17-ի նիստի թիվ 1 արձանագրության 3-րդ կետով տրված հանձնարարականի ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի հետ համատեղ տեղի են ունեցել քննարկումներ «Հայաստանի ոսկեգործների և ադամանդագործների ասոցիացիայի» կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:
  Քննարկումները հիմնականում ծավալվել են նվազագույն շահութահարկից ազատելու, ոսկու ստանդարտացված ձուլակտորների և ձուլագնդիկների իրացումը ավելացված արժեքի հարկից ազատելու, ոսկեգործության մեջ օգտագործվող գործիքների, սարքավորումների և նյութերի ներմուծումը ավելացված արժեքի հարկից և մաքսատուրքից ազատելու, հաշվապահական հաշվառման պարզեցման ասոցիացիայի առաջարկությունների շուրջ և քննարկման արդյունքները ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2004թ. ապրիլի 30-ին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմին:
- ✓ Ի կատարումն Գործարարության աջակցման խորհրդի 2004թ. փետրվարի 17-ի նիստի թիվ 1 արձանագրության 3-րդ կետով տրված հանձնարարականի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի ներկայացուցիչների հետ վերոհիշյալ հարցի վերաբերյալ կազմակերպվել են մի շարք աշխատանքային քննարկումներ, որոնց արդյունքում որոշվել է ընդլայնել խնդրո առարկա հարցի քննարկման շրջանակը, անհրաժեշտ համարելով այլ շահագրգիռ մարմիններից ստանալ իրենց կողմից հավաքագրվող հաշվետվությունների ձևերը, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեղեկատվություն, որի բովանդակությունը մշակվել է քննարկումների ընթացքում:
  ՀՀ վարչապետի N 099-2460 հանձնարարությամբ ՀՀ նախարարությունները, ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովները (ծառայությունները, խորհուրդները) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնելու հաշվետվությունների ձևերը և համապատասխան տեղեկատվություն՝ համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված ձևի:

ԳԱԽ-ի քարտուղարության ջանքերով մեծածավալ քննարկումներ են կազմակերպվել «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման, այդ գործարքների գծով վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի շուրջ: Այս հարցը միշտ եղել է ԳԱԽ-ի ուշադրության կենտրոնում: Այսպես օրինակ՝ ԳԱԽ-ի արդյունավետ աշխատանքի արդյունքն էր, որ 2003թ. ընդունվեց մի կարգ, որը նախօրոք քննարկվել և հավանության էր արժանացել ԳԱԽ-ի գործարար համայնքը ներկայացնող անդամների կողմից: Հաշվի առնելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները՝ անհրաժեշտություն առաջացավ մշակել վերոհիշյալ կարգի նոր նախագիծ: ԳԱԽ-ի անդամներից ստացվել են առաջարկություններ, որի արդյունքում քննարկումներ են կազմակերպվել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունում, ԳԱԽ-ի աշխատանքային խմբերում, ինչպես նաև ՀՀ վարչապետի մոտ:

Հաշվի առնելով այն փաստը, որ 2004թ. գործարարների, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների մոտ մեծ էր ցանկությունը մասնակցելու ԳԱԽ-ի աշխատանքներին՝ ԳԱԽ-ի քարտուղարության կողմից նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի «Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը, որը հաստատվել է ՀՀ Նախագահի 08.06.2004թ ՆՀ-104-Ա հրամանագրով, համաձայն որի փոփոխվել է խորհրդի կազմը և 44-ից դարձել 46, որն էլ

կոչվում է «46-ի ակումբ»: Նախապատրաստվել և ներկայացվել է նաև ԳԱԽ-ի անդամների հերթական ռոտացիայի մասին որոշման նախագիծը, որը հավանության է արժանացել 05.06.2004թ. N 2 նիստում՝ ՀՀ վարչապետի 20.05.2004թ. N 339-Ա որոշմամբ:

Գործարարության աջակցման խորհրդի արդյունավետ աշխատանքի արդյունքն է նաև այն փաստը, որ ԳԱԽ-ի քարտուղարությանն են դիմել մի շարք ընկերություններ գործունեության ընթացքում առաջացած խոչընդոտների վերաբերյալ, որի արդյունքում ՀՀ վարչապետի կողմից հանձնարարականներ են տրվել համապատասխան իրավասու պետական կառավարման մարմիններին՝ խնդրին ընթացք տալու նպատակով: Մասնավորապես պետք է նշել, որ ԳԱԽ-ի քարտուղարությանն էր դիմել Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի Հանրապետության դեսպանատան գրասենյակի ղեկավար-2-րդ քարտուղար պրն.՝ Վ.Վ.Սապկալը՝ «Արարատ ոսկու արդյունահանման ձեռնարկություն» ՍՊԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի միջև ծագած խնդրի կարգավորման վերաբերյալ: Ըստ ՀՀ վարչապետի N 094-3513 հանձնարարականի ՀՀ մաքսային պետական կոմիտեի 27.05.04թ. թիվ 3997/4-2 գրությամբ թույլատրվել է ՝ «Արարատ ոսկու արդյունահանման ձեռնարկության»-ը սև մետաղի ջարդոնի արտահանման մաքսային ձևակերպումները:

ԳԱԽ-ի քարտուղարության կողմից կազմվել և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն է ուղարկվել տեղեկանք, որում նշվել է ԳԱԽ-ի նախապատմությունը, մինչ այժմ կատարած աշխատանքները և գործունեության ընթացքում առավել նշանակալի ձեռքբերումները՝ ՀԲ-ի տարեկան հաշվետվությունում ներառելու նպատակով:

ԳԱԽ-ի քարտուղարության կողմից աշխատանքներ են տարվել խորհրդի 2004թ. թվով 2-րդ նիստի նախապատրաստման համար: Քարտուղարության առաջարկով և ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականով օրակարգում ընդգրկված հարցերը նախօրոք քննարկվել են համապատասխան իրավասու նախարարություններում և գերատեսչություններում: Օրակարգի նյութերը և քննարկման փաստաթղթերը քարտուղարության կողմից նախապատրաստվել և ուղարկվել են համապատասխան նախարարություններ, գերատեսչություններ և խորհրդի բոլոր անդամներին:

Գործարարության աջակցման խորհրդի թվով 2-րդ նիստը հրավիրվեց 2004թ. հունիսի 5-ին, հետևյալ օրակարգով՝

1. ԳԱԽ-ի 17.02.2004թ. նիստի N 1 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:
2. «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման, այդ գործարքների գծով վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկում:
3. ՀՀ վարչապետի որոշմամբ ՀՀ ԳԱԽ-ի անդամների հերթական ռոտացիայի մասին
4. Այլ հարցեր

**Օրակարգային հարցերի քննարկման արդյունքում քննարկման արդյունքում հանձնարարվել է.**

Բավարար համարելով Գործարարության աջակցման խորհրդի (ԳԱԽ) 17.02.2004թ. նիստի N 1 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքը՝

ա) ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար պրն.՝ **Կ. Ճշմարիտյանին**՝ ՀՀ ոսկեգործների և ադամանդագործների ասոցիացիայի և շահագրգիռ մյուս կազմակերպությունների հետ համատեղ շարունակել քննարկումները ասոցիացիայի առաջարկությունների շուրջ և, անհրաժեշտության դեպքում, արդյունքները ներկայացնել ԳԱԽ-ի հաջորդ նիստին:

բ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար՝ պրն. **Վ. Խաչատրյանին**՝ հաշվի առնելով ԳԱԽ-ի 17.02.2004թ. նիստի N 1 արձանագրության 3-րդ կետով տրված

հանձնարարությամբ ուսումնասիրության ենթակա խնդրի բարդությունը և մեծ ծավալը՝ շարունակել ստացված տեղեկատվության ուսումնասիրություններն ու շահագրգիռ մարմինների հետ համատեղ քննարկումները և մինչև **2004թ. նոյեմբեր ամիսը** ԳԱԽ-ին ներկայացնել հիմնավորված առաջարկություններ, այդ թվում Հայաստանի Հանրապետության գործող նորմատիվ ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

գ) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ՝ պրն. **Ֆ.Ցոլակյանին՝ 15 օրյա ժամկետում** ավարտել «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման, այդ գործարքների գծով վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակումը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ և ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունում գործարարների հետ կայացած խորհրդակցություններում, ինչպես նաև սույն նիստում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, մեկ անգամ ևս այն քննարկել շահագրգիռ պետական կառավարման մարմինների և ԳԱԽ-ի համապատասխան աշխատանքային խմբի հետ և սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

դ) ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, ԳԱԽ-ի փոխնախագահ՝ պրն. **Վ. Ներսիսյանցին**՝«46-ի ակումբ»-ի առաջիկա նիստում օրակարգային հարցերից բացի, քննարկել՝

- «Հազարամյակի զարգացման նպատակների» հայաստանյան ծրագրի վերաբերյալ առաջարկությունները՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ
- ԳԱԽ-ի մշտական գործող երեք աշխատանքային խմբերում անդամների համալրման և փոփոխությունների վերաբերյալ հարցերը՝ հաշվի առնելով ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ ԳԱԽ-ի գործարար համայնքը ներկայացնող անդամների ցանկում նախատեսված փոփոխությունները և առաջարկություններ ներկայացնել ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստին:

**Նիստից հետո ընկած ժամանակահատվածում վերոհիշյալ հանձնարարականների կատարման ընթացքում.՝**

Ի կատարումն Գործարարության աջակցման խորհրդի ս/թ հունիսի 5-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի ա/ և բ/ ենթակետերով տրված հանձնարարականի՝ ս/թ հունիսի 10-ին Զարգացման հայկական գործակալությունում հրավիրվեց «46-ի ակումբ»-ի նիստ՝ հետևյալ օրակարգով.

1. ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, խորհրդի փոխնախագահ՝ պրն. Վ. Ներսիսյանցի «46-ի ակումբ»-ի նիստի բացման խոսք:
2. Ամերիկյան «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի շուրջ խորհրդակցություն:
3. Գործարարության աջակցման խորհրդի անդամների կողմից «Պրոբլեմների բանկը» համալրելու համար նոր խնդիրների ներկայացում և նախնական քննարկում:

**Օրակարգային հարցերի քննարկման արդյունքում ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի ընդլայնված կազմով նիստը որոշեց.**

- Առաջարկել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի համակարգող՝ պրն. Վ.Խաչատրյանին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի վերջնական տարբերակը տրամադրել ԳԱԽ-ին քննարկելու համար:
- ԳԱԽ-ի անդամներին՝ 10 օրյա ժամկետում ԳԱԽ-ի քարտուղարությանը ներկայացնել գրավոր առաջարկություններ «Պրոբլեմների բանկը» համալրելու և ձևավորելու համար:

- ԳԱԽ-ի քարտուղարությանը՝

ա/ կազմակերպել մշտական գործող երեք աշխատանքային խմբերի նոր անդամներով համալրումը և վերաձևավորումը,

բ/ ապահովել «Պրոբլեմների բանկում» ներառված խնդիրների քննարկումը աշխատանքային խմբերում, դրանց արդյունքները հետագայում ԳԱԽ-ի նիստերում քննարկելու համար:

Նիստից հետո ընկած ժամանակահատվածում ԳԱԽ-ի քարտուղարության կողմից նիստերի արձանագրությունները ուղարկվել են խորհրդի բոլոր անդամներին՝ կից գրություններով:

Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից աշխատանքներ են տարվել 2004թ. հունիսի 5-ին հրավիրված Գործարարության աջակցման խորհրդի 2-րդ և հունիսի 10-ին «46-ի ակումբ»-ի նիստերում տրված հանձնարարականների կատարման ապահովման ուղղությամբ, մասնավորապես՝

- Ի կատարումն Գործարարության աջակցման խորհրդի 2004թ. հունիսի 5-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով տրված հանձնարարականի ԳԱԽ-ի քարտուղարության ջանքերով մեծածավալ քննարկումներ են կազմակերպվել «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման, այդ գործարքների գծով վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի շուրջ: Վերոհիշյալ նախագիծը քննարկվել է նաև ԳԱԽ-ի հարկային և մաքսային վարչարարության կարգավորման հարցերի խմբում և առաջարկություններով ու դիտողություններով հանդերձ ներկայացվել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն, որն էլ իր կողմից լրամշակված տարբերակը համապատասխան տեղեկանքով ներկայացրել է ՀՀ կառավարության աշխատակազմ:
- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 8-ի ՆՀ-104-Ա հրամանագրով գործարար համայնքը ներկայացնող անդամների ցանկում կատարված փոփոխությունները ու դրա հետևանքով աշխատանքային խմբերի անդամների համալրման ու վերակազմավորման անհրաժեշտությունը՝ քարտուղարության կողմից, ԳԱԽ-ի անդամների ցանկությամբ, վերակազմավորվել և համալրվել են նոր անդամներով:

Բացի այդ քարտուղարության կողմից նախապատրաստվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով փոփոխություններ են նախատեսվել ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 22-ի N131 որոշման մեջ, որով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004թ. հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2000 թվականի դեկտեմբերի 31-ի «Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ՆՀ-104-Ա հրամանագրի համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. օգոստոսի 6-ի «Գործարարության աջակցման խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» N131 որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ կատարվել են փոփոխություններ:

ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային Բանկի Երևանյան գրասենյակի կողմից 2000 թվականից սկսած շարունակաբար իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգիչ և վարչական ծախսերի ամենամյա հետազոտություն, որն ուսումնասիրում է ՀՀ-ում գործունեություն իրականացնող մոտ 250 ընկերություններ: Այս տարեկան հետազոտությունը հնարավորություն է տալիս վեր հանել տնտեսության ներկա փուլում եղած խոչընդոտները, որով համալրվում է «Պրոբլեմների բանկը», իսկ հետագայում քննարկվում է ԳԱԽ-ի նիստերում: Հարկ է նշել, որ սկսած 2002 թվականից ԳԱԽ-ի ուշադրության կենտրոնում է գտնվել վերոհիշյալ ուսումնասիրությունը, որը բազմիցս քննարկվել է խորհրդի նիստերում: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը ՀՀ կառավարության միջնորդությամբ, 2003թ. աշնանը Համաշխարհային Բանկի և

Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի /ՄՖԿ/ համատեղ կառույց հանդիսացող Օտարերկրյա Ներդրումների Խորհրդատվական Ծառայությունը /ՕՆԽԾ/ խորհրդատվության ծրագիր նախաձեռնեց՝ 2000թ.-ին կատարված Վարչական Խոչընդոտների Ուսումնասիրությունը նորացնելու համար՝ ինքնագնահատման մոտեցման կիրառմամբ: ՀՀ կառավարությունում ՕՆԽԾ-ի գլխավոր գործընկերը ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունն էր, հետագայում որպես ծրագրի աշխատանքները համակարգող խորհուրդ առաջադրվեց ԳԱԽ-ը: Արդյունքում ԳԱԽ-ի քարտուղարությունը Օտարերկրյա Ներդրումների Խորհրդատվական Ծառայություն Համաշխարհային Բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի համատեղ ծառայության հետ միասին կազմակերպեց սեմինար ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային Բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի «Օտարերկրյա Ներդրումների Խորհրդատվական Ծառայության» (FIAS) կողմից իրականացված «Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» ուսումնասիրության արդյունքների և նախնական առաջարկությունների շուրջ, որը տեղի է ունեցել ս/թ սեպտեմբերի 14-ին Զարգացման հայկական գործակալության նիստերի դահլիճում, որտեղ իրենց մասնակցությունն են ունեցել նաև ԳԱԽ-ի անդամները, ՀՀ պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները, «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի աշխատակիցները, ինչպես նաև ՀՀ-ում գործող մի շարք կարևոր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝USAID, AEPLAC:

Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի «Օտարերկրյա Ներդրումների Խորհրդատվական Ծառայության» (ՕՆԽԾ) կողմից իրականացված «Հայաստանում ձեռնարկատիրակն գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» ուսումնասիրության վերաբերյալ ՀՀ Վարչապետի կողմից 2004թ. հոկտեմբերի 10-ի հանձնարարականի իրականացման ուղղությամբ:

Ի կատարումն ՀՀ Վարչապետի 10.10.04թ. թիվ 033-6541 հանձնարարականի՝ ԳԱԽ-ի քարտուղարության կողմից նախապատրաստվել և խորհրդի անդամներին է ուղարկվել ՕՆԽԾ հաշվետվությունը՝ մագնիսական սկավառակի տեսքով: Ներկայումս քարտուղարությունը հավաքագրել է պետական կառավարման մարմինների և ԳԱԽ-ի գործարար համայնքը ներկայացնող անդամների կողմից ուղարկված առաջարկություններն ու դիտողությունները , ամփոփել է և նախապատրաստում է տվյալ հարցի քննարկումը 2005թ. ԳԱԽ-ի անդրանիկ նիստում:

ԳԱԽ-ի քարտուղարության կողմից աշխատանքներ են տարվել նաև խորհրդի հաջորդ նիստի նախապատրաստման համար: Քարտուղարության առաջարկով և ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականով օրակարգում ընդգրկված հարցերը նախօրոք քննարկվել են համապատասխան իրավասու նախարարություններում և գերատեսչություններում: Օրակարգի նյութերը և քննարկման փաստաթղթերը քարտուղարության կողմից նախապատրաստվել և ուղարկվել են համապատասխան նախարարություններ, գերատեսչություններ և խորհրդի բոլոր անդամներին:

Գործարարության աջակցման խորհրդի թվով 4-րդ նիստը, որտեղ մասնակցում էին նաև մի շարք պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, ՀՀ Վարչապետի նախագահությամբ ՀՀ կառավարության N 1 տանը հրավիրվեց 2004թ. նոյեմբերի 10-ին, հետևյալ օրակարգով՝

1. Գործարարության աջակցման խորհրդի նախորդ նիստի արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:
2. Հաղորդում ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի «Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայության (FIAS)» կողմից իրականացված «Հայաստանում գործարարության վարչական ընթացակարգերի գնահատում» ուսումնասիրության մասին:
3. Գործարարության աջակցման խորհրդի արտահանման աջակցման և խրախուսման հարցերի, հարկային և մաքսային վարչարարության կարգավորման հարցերի և օրենսդրական նախաձեռնությունների և նորմատիվ փաստաթղթերի մշակման

հարցերի մշտական գործող աշխատանքային խմբերի նորացված անհատական կազմերի հաստատման և նրանց ղեկավարների ռոտացիոն կարգով ընտրության մասին:

Նիստը բավարար համարելով Գործարարության աջակցման խորհրդի նախորդ նիստի արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքը՝ ԳԱԽ-ի անդամների համաձայնությամբ, ՀՀ վարչապետի կողմից տրվել են հանձնարարականներ.

ա/ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանին՝ հաշվի առնելով Գործարարության աջակցման խորհրդի 2004 թվականի փետրվարի 17-ի նիստի N 1 արձանագրության 3-րդ կետով տրված հանձնարարականի խնդրի լուծման բարդությունը, կարևորությունը և այդ նպատակով ուսումնասիրության ենթակա նյութերի մեծ ծավալը, շարունակել ստացված տեղեկատվության ուսումնասիրությունները ու շահագրգիռ մարմինների, անհրաժեշտության դեպքում՝ նաև ԳԱԽ-ի աշխատանքային խմբերի անդամների, հետ համատեղ քննարկումները և մինչև 2005 թվականի ապրիլի 1-ը հարցին տալ լուծում;

բ/ ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ Ս.Ղոնախչյանին՝ սահմանված կարգով ընթացք տալ քննարկումների արդյունքում լրամշակված և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացված «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման, այդ գործարքների գծով վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին, այդ նպատակով, անհրաժեշտության դեպքում, հաջորդ շաբաթվա ընթացքում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ՀՀ վարչապետի մոտ կազմակերպել խորհրդակցություն:

գ/ Ընդունել ի գիտություն ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի «Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայության (FIAS)» կողմից իրականացված «Հայաստանում գործարարության վարչական ընթացակարգերի գնահատում» ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվությունը;

դ/ ՀՀ նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, Գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ **Վ. Ներսիսյանցին** և Գործարարության աջակցման խորհրդի քարտուղար՝ **Վ. Մովսիսյանին**՝

- մինչև 2005 թվականի փետրվար ամիսը կազմակերպել «Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայության (FIAS)» կողմից իրականացված «Հայաստանում գործարարության վարչական ընթացակարգերի գնահատում» ուսումնասիրության վերաբերյալ քննարկումներ.
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանի հետ համատեղ երկշաբաթյա ժամկետում Գործարարության աջակցման խորհրդի «46-ի ակումբում» կազմակերպել քննարկումներ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի լրամշակված տարբերակի վերաբերյալ:

ե/ Հաստատել Գործարարության աջակցման խորհրդի մշտական գործող երեք աշխատանքային խմբերի ներկայացված անհատական կազմերը;

զ/ **Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝ տասօրյա ժամկետում** կազմակերպել խորհրդի մշտական գործող երեք աշխատանքային խմբերի նիստերի անցկացումը և խմբերի ղեկավարների ռոտացիոն կարգով ընտրությունը;

է/ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղար **Վ. Մովսիսյանին**՝ սահմանված կարգով ներկայացնել առաջարկություն Գործարարության աջակցման խորհրդի բոլոր նիստե-րին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Արդյունաբերողների և գործարարների միության նախագահի մասնակցությունը ապահովելու վերաբերյալ:

Նիստից հետո ընկած ժամանակահատվածում քարտուղարության կողմից նախապատրաստվել և համապատասխան գրություններով խորհրդի բոլոր անդամներին է ուղարկվել նիստի արձանագրությունը, ինչպես նաև աշխատանքներ են տարվել նիստի արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման, ժամկետների պահպանման և վերահսկողության ուղղությամբ, մասնավորապես.

- ✓ Ներկայումս ՀՀ ֆինանսների և էկոնամիկայի նախարարությունում ընթացքի մեջ է գտնվում ԳԱԽ-ի 2004թ. նոյեմբերի 10-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով տրված հանձնարարականի կատարումը: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ԳԱԽ-ի քարտուղարություն է ներկայացվելու վերոհիշյալ հարցի լուծման գործընթացի ուղղությամբ առաջարկություններ, որի վերաբերյալ որոշումներ կընդունվեն ԳԱԽ-ի 2005թ. առաջիկա նիստում:
- ✓ Ի կատարումն ԳԱԽ-ի 2004թ. նոյեմբերի 10-ի նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով տրված հանձնարարականի «Ավելացված արժեքի հարկի զրայական դրույքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման կամ վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման, այդ գործարքների գծով վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ մեկ անգամ ևս տեղի է ունեցել խորհրդակցություն ՀՀ Վարչապետի մոտ և ձեռք բերված համաձայնությունների արդյունքում հաստատվել է վերոհիշյալ կարգը ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1923-Ն որոշմամբ, որով էականորեն պարզեցվել և կանոնակարգվել է վերոհիշյալ գործընթացը:
- ✓ Քարտուղարության կողմից ս/թ փետրվար ամսին Զարգացման հայկական գործակալությունում Գործարարության աջակցման և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդների գործարար համայնքը ներկայացնող անդամների մասնակցությամբ իրականացվել է լայնածավալ քննարկումներ ՕՆԽԾ հաշվետվության շուրջ: ԳԱԽ-ի քարտուղարության կողմից հավաքագրվում և ամփոփվում են ստացված առաջարկությունները, որոնք էլ հիմք կհանդիսանան հետագայում գործարար միջավայրի բարելավման ծրագիրը ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ԳԱԽ-ի քարտուղարության կողմից մշակելու և ԳԱԽ-ի քննարկմանը ներկայացնելու համար: Հարկ է նշել, որ քարտուղարության նախաձեռնությամբ և օժանդակությամբ անգլերենից թարգմանվել են ՕՆԽԾ հաշվետվության 5-րդ և 7-րդ հավելվածները /մոտավորապես 276էջ/, ինչպես նաև քարտուղարության ուժերով պատրաստվել է ՕՆԽԾ հաշվետվության լրիվ տարբերակը՝ լազերային սկավառակի տեսքով /150 օրինակից/, որն էլ քարտուղարության կողմից ուղարկվել է 24 պետական կառավարման մարմիններին, Հայաստանում գործունեություն իրականացնող 10 միջազգային և 13 հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև խորհրդի բոլոր 46 անդամներին:
- ✓ Ի կատարումն ԳԱԽ-ի 2004թ. նոյեմբերի 10-ի նիստի թիվ 5 արձանագրության 7-րդ կետով տրված հանձնարարականի ԳԱԽ-ի քարտուղարության կողմից նախապատրաստվում է աշխատանքային խմբերի նիստեր կազմակերպել ս/թ մարտ ամսին՝ խմբերի ղեկավարների ռոտացիոն կարգով ընտրության համար:

Նշենք նաև, որ 2004 թվականի դեկտեմբերի 22-ին «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի նիստերի դահլիճում հրավիրվել է տարեվերջի հանդիսավոր նիստ ԳԱԽ-ի գործարար համայնքը ներկայացնող և այլ կազմակերպությունների անդամների մասնակցությամբ, և ԳԱԽ-ի շրջանակներում առավել ակտիվություն ցուցաբերած գործարարներին ԶՀԳ-ի և ԳԱԽ-ի քարտուղարության անունից պատրաստվել և հանձնվել են շնորհակալագրեր:

Ներկայումս աշխատանքներ են տարվում ԳԱԽ-ի ս/թ առաջին նիստի նախապատրաստման ուղղությամբ, որտեղ կքննարկվի ԳԱԽ-ի 2004թ կատարած աշխատանքների հաշվետվությունը, ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի «Օտարերկրյա ներդրումների խորհրդատվական ծառայության (ՕՆԽԾ)» կողմից իրականացված «Հայաստանում գործարարության վարչական ընթացակարգերի գնահատում» ուսումնասիրության վերաբերյալ ներկայացրած առաջարկությունները և Հայաստանում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագիրը:

# Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 1

## 2000թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԵՐԿԱ ԸՆԹԱՑՔԸ

## 2000թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԵՐԿԱ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | 2000թ. զեկույցում կատարված առաջարկությունները | Մինչև 2004թ. իրականացված բարեփոխումների վիճակը | Նշումներ |
|---|---|---|---|
| *I. ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ* | | | |
| 1.1 | *Կանոնակարգերի և օրենքների մշակման գործընթացում մասնավոր հատվածի հետևողական ներգրավում*<br>➢ Օրենքների միջև հակասությունները և դրանց կիրառման դժվարությունները առաջ են գալիս կանոնակարգերի ոչ ժամանակին պատրաստման պատճառով, դրանից կարելի էր խուսափել:<br>➢ Մասնավոր հատվածի ներգրավումը թույլ կտա հաշվի առնել տեղեկատվության ամենաարժեքավոր աղբյուրի տեսակետը, քանի որ մասնավոր հատվածն անմիջապես կարող է բացահայտել դժվարություններից շատերը, քանզի դրանք ազդում են հենց մասնավոր հատվածի գործունեության վրա:<br>➢ Նման կառույցի ձևավորումը կերաշխավորի, որ ներդրողները նախապես տեղյակ կլինեն նոր զարգացումների մասին և նոր օրենսդրության հանրորեն հայտնի դառնալու ժամանակ կիջեցվի բացահայտ քննադատության և բողոքների վտանգը: | ➢ ՀԲ/ՕՆԽԾ առաջարկություններից հետո, 2000թ. հիմնադրվեց Գործարարության աջակցման խորհուրդը և ՀՀ Նախագահի 2000թ. թիվ 768 հրամանագրով նշանակվեցին նրա անդամները:<br>➢ Խորհրդի նախագահը ՀՀ վարչապետն է, նախագահի տեղակալը՝ ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդականը և քարտուղարը՝ Զարգացման հայկական գործակալություն գլխավոր տնօրենը: Խորհրդի հիմնական անդամներ են նաև հետևյալ նախարարները. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար, Երևանի քաղաքապետը և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահը:<br>➢ Խորհրդի կազմի՝ 46 անդամից բաղկացած ցանկից, տարին մեկ անգամ, ռոտացիոն կարգով ութը դառնում են խորհրդի անդամ: Խորհրդի ձևավորումից հետո տեղի է ունեցել ութ ռոտացիա:<br>➢ Խորհրդի պատասխանատվության հիմնական խնդիրներն են հանդիսանում. վարչական խոչընդոտների վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումների մշակում, պետության և մասնավոր հատվածի միջև արդյունավետ համագործակցության մեխանիզմի մշակում, ՀՀ տնտեսական քաղաքականության մշակում, օժանդակություն բարենպաստ օրենսդրական միջավայրի ձևավորմանը:<br>➢ Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է յուրաքանչյուր ամիս հրավիրվող նիստերի միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրվում են արտահերթ նիստեր: Ստեղծումից հետո կայացել են խորհրդի 23 նիստեր, որոնցից 9-ը՝ 2001-ին, 5-ը՝ 2002-ին, 5-ը՝ 2003-ին և 4-ը՝2004-ին, որոնց ընթացքում քննարկվել են գործարարների կողմից բարձրացված հիմնախնդիրներ և ՀՀ օրենքների մի շարք նախագծեր:<br>➢ Համաձայն ՀՀ վարչապետի 2002թ. մարտի 5-ի որոշման, Զարգացման հայկական գոծակալությունը գործում է որպես ԳԱԽ-ի քարտուղարություն: Քարտուղարությունը պատրաստում է խորհրդի անդամների կողմից առաջարկված հարցերի՝ նիստերին առնչվող և դրա օրակարգի վերաբերյալ համապատասխան նյութերն ու փաստաթղթերը, համակարգում է խորհրդի կողմից ընդունված որոշումների իրականացումը, խորհրդին է ներկայացնում ներդրումների խթանման և ՀՀ-ում | |

| | | | |
|---|---|---|---|
| | | վարչական խոչընդոտների վերացման վերաբերյալ առաջարկությունները, ապահովում է խորհդի գործունեության և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը: | |
| 1.2 | *Ներդրումներ կատարել հանրորեն մատչելի տեղեկատվության աղբյուրների ձևավորման և վերապատրաստման գործընթացի մեջ:*<br><br>➢ Քաղաքացիական ծառայողները կարիք ունեն համապարփակ վերապատրաստման՝ հասկանալու համար թե ինչպես պետք է կիրառվի նոր օրենսդրությունը և մեկնաբանվի հատուկ հանգամանքներում:<br><br>➢ Նոր օրենսդրության վերաբերյալ հանրությունը կրթելու գործին, հատկապես բոլոր հիմնական շահագրգիռ կողմերին, կառավարությունը առավել ուշադրություն պետք է դարձնի:<br><br>➢ Կառավարությունը պետք է բոլոր իրավական ակտերը պարունակող՝ պարբերաբար կոդավորվող և հաշվառվող շտեմարան ստեղծի: | ➢ Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի, բոլոր քաղաքացիական ծառայողները պարտավոր են անցնել վերապատրաստման դասընթացներ և ատեստավորվել երեք տարին մեկ անգամ: Համաձայն նշված օրենքի, տարեկան բոլոր քաղացիական ծառայողների մեկ երրորդը պետք է վերապատրաստվի և ատեստավորվի, անցնելով համապա-տասխան վերապատրաստման դասընթացներ, որոնք բաղկացած են իրավունքի, տնտեսագիտության, ֆինանսների և այլ հատուկ ոլորտների մասնագիտացված դասընթացներից:<br>➢ Նոր օրենքների և այլ իրավական ակտերի ուժի մեջ մտնելու դեպքերում պետական մարմինները, միջազգային կազմակերպությունները և հասարակական կազմակերությունները՝ համապատասխան շահագրգիռ կողմերի ներգավմամբ պարբերաբար հանդիպումներ են կազմակերպում՝ հանրությանը կրթելու համար:<br>➢ ՀՀ կառավությունը շարունակում է քայլեր իրականացնել գործարարաների համար ՀՀ օրենսդրության և կարգերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի և մատչելի դարձնելու ուղղությամբ: Ներկայումս հարկային և մաքսային ծառայությունների, պետական այլ մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների տարբեր ինտերնետային էջեր գոյություն ունեն (ինտերնետային էջերի ամբողջական ցանկի համար տես Հավելված I), որտեղ տեղադրված է գործարարության մասին օրենսդրություն, դրա կիրառման վերաբերյալ կարգերն ու կանոնները, մեթոդաբանական ցուցումներ և բացատրություններ: Պարբերաբար հրատարակվում են գործարարությանը վերաբերող օրենսդրության վերաբերյալ ուղեցույցներ և գրքույկներ: | |
| 1.3 | *Ներդրումների մասին նոր օրենքի ընդունում:*<br>➢ Ներկայիս «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի բացթողումները և հակասությունները վերացնելու նպատակով կառավարությունը պետք է շեշտը դնի «Ներդրումների մասին» նոր օրենքի նախագծի ընդունման վրա, որը և կհանդիսանա Հայաստանում ՕՈՒՆ-երի վերաբերյալ նոր օրենսդրությունը: | ➢ 2002թ. մշակվել է «Ներդրումների մասին» ՀՀ նոր օրենքը: 2003թ-ին համաձայն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հայտի, ՕՆԽԾ-ն համապատասխան խորհդատու տրամադրեց օրենքի նոր նախագիծը բարելավելու համար խորհրդատվություն տրամադրելու նպատակով, որից հոտո այն լրամշակվեց՝ հաշվի առնելով կատարված առաջարկությունները: | |
| 1.4 | *Պարզաբանել առկա օրենսդրական հակասությունները պաշտոնական իրավական եզրակացությունների, օրենսդրական փոփոխությունների կամ նոր օրենքների միջոցով:*<br><br>➢ Կառավարությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի օրենսդրության տարբեր հատվածներում առկա հակասությունների վերացմանը: Այն պարագայում, երբ նման օրենքները չեն ընդունվի մոտ ապագայում, նպատակահարմար կլիներ համապատասխան մարմնի կամ նախարարության կողմից իրավական պաշտոնական | ➢ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ մտավ 1999թ. հունվարի 1-ից, որից հետո մի շարք օրենքներ և իրավական ակտեր ընդունվեցին՝ նպատակ ունենալով քաղաքացիական օրենսդրությունը համապատասխանեցնել Քաղաքացիական օրենսգրքի հետ, այս ձևով նվազեցնելով գործող օրենսդրության հակասությունները:<br>«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2002թ. մայիսի 21-ին, բավական սպառիչ կերպով լուծում է ՀՀ օրենսդրության հիմնական հակասությունները: Օրենքը | |

| | | | |
|---|---|---|---|
| | եզրակացության տրամադրումը՝ պարզաբանելու համար իրավիճակը և ապահովելու այդ կանոնների հստակ կիրառումը:<br><br>➢ Հատկապես, հստակեցման կարիք են զգում արտադրությանը ուղղվող ապրանքների ներկրման ժամանակ մաքսատուրքերից ազատման խնդիրների հետ կապված հարցերը, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների կողմից հողը սեփականության իրավունքով ձեռք բերման հարցերը: | սահմանում է օրենքների հակասական դրույթների մեկնաբանման և կիրառման սկզբունքները, և հավասար իրավական ակտերի միջև և իրար հանդեպ գերակայություն ունեցող իրավական ակտերի պարագայում: Օրենքում նշանակալի դրույթներ կան, որոնք կանոնակարգում են նոր և մինչ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումը ընդունված օրենքների միջև հակասությունները: Մասնավորապես, միևնույն մարմնի կողմից ընդունված համահավասար իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում նախկինում ընդունվածի դրույթները ուժի մեջ են համարվում: Կա միայն մեկ բացառություն՝ մինչև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումը միևնույն մարմնի կողմից ընդունված ակտերի հակասությունների պարագայում, ուժի մեջ են ավելի ուշ ընդունված ակտի դրույթները:<br>Բացի վերը նշվածը կանոնակարգելուց, օրենքը նախատեսում է նաև իրավական ակտի վերաբերյալ բացատրությունը: Օրենքով նախատեսված է պաշտոնական մեկնաբանման ապահովումը, այն կարող է տրամադրվել քաղաքացու կամ իրավաբանական անձի պահանջի հիման վրա, երբ իրավական ակտում առկա են երկիմաստ դրույթներ կամ միևնույն կամ գերակա իրավական ուժ ունեցող իրավական ակտերում պարունակվում են իրար հակասող դրույթներ, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը սահմանում է, որ պաշտոնական մեկնաբա-նությունը տրամադրում է այն մարմինը, որը պատասխանատու է տվյալ իրավական ակտի կիրառման համար: | |
| 1.5 | *Հայաստանի դատարանների կատարելագործումը մինչև գերազանցության աստիճանի:*<br><br>➢ Կառավարությունը կարող է քննարկման առարկա դարձնել դատական համակարգի համար կարողությունների ստեղծման լայնածավալ ծրագրի անցկացումը (դատական համակարգի ենթակառուցվածքի բարելավում, դատավորների համար տնտեսական հարցերով վերապատրաստման դասընթացների կազմակերպում):<br><br>➢ Կառավարությունը՝ օրենքի և իրավական ինստիտուտների դերը ժամանակակից հասարակության համար և ինչպես կարող է հանրությունը օգտվել այս ծառայություններից թեմաների վերաբերյալ լայն հասարակական արշավ պետք է ձեռնարկի: | ➢ 2001թ. Հայաստանում հիմնադրվեց տնտեսական դատարանների ինստիտուտը, որոնք քննում են ձեռնարկատիրական գործունեության իրականացման ընթացքում իրավաբանական անձանց, անհատ ձեռներեցների միջև կամ նրանց՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս, որպես վեճի կողմ ներգրավված լինելու դեպքում վեճերը:<br>➢ Մի կողմից այն թույլ տվեց պատշաճ արագությամբ քննել վեճերը (տնտեսական դատարանների տարանջատման շնորհիվ), մյուս կողմից բարձրացնել վեճերի քննության մակարդակը՝ քանի որ այս դատարանների դատավորները մասնագիտանում են միայն տնտեսական վեճերի քննության ոլորտում:<br>➢ Դատավորների աշխատավարձերի էական բարձրացումը նպատակ ուներ բարձրացնել դատավորների անկախությունը և այս ոլորտում վերացնել կոռուպցիան:<br>➢ Միջնորդ դատավարության ինստիտուտը նախատեսված է «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքով: Համաձայն սույն օրեքի 5-րդ հոդվածի, միջնորդ դատարանները քննում են ՀՀ դատարանների իրավասության գույքային վեճեր, բացառությամբ պետա-իրավական, վարչա-իրավական և հարկերի վրա հիմնված իրավահարաբերության գործերի, ալիմենտների և քաղաքացիների ու իրավաբանական անձանց սնանկության հետ կապված գործերի: | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ➢ Այնուամենայնիվ, միջնորդ դատարանների ներգրավմամբ տնտեսական վեճերի լուծման մշակույթը դեռևս թույլ է զարգացած: | |
| 1.6 | *Հակակոռուպցիոն բազմակողմանի քարոզարշավի նախաձեռնում:*<br><br>➢ Կաշառակերությունից և կամայական որոշումների ընդունման հնարավորություններից զուրկ դատական և վարչական համակարգի ձևավորման նպատակով՝ Կառավարությունը պետք է մեխանիզմներ մշակի, որոնք պետական ծառայողների համար «անթույլատրելի թանկ» կդարձնեն իրենց իշխանության չարաշահումը:<br><br>➢ Այս ամենը պետք է ուղեկցվի հանրային քարոզարշավով, որը ցույց կտա կառավարության հաստատակամությունը ծառայողական հանցանքներն ու կաշառակերությունը արմատախիլ անելու գործում: | ➢ Կաշառակերության դեմ պայքարի ռազմավարությունը ընդունվել է ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի համապատասխան որոշմամբ: (http://www.gov.am/en/gov/anticorruption).<br>➢ Ներկայումս մեկնարկել է կաշառակերության դեմ պայքարի կոալիցիան (առավել մանրամասն տեղեկությունների համար տես՝ www.transparency.am), բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ (կառավարության ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպություններ և հասարակական կազմակերպություններ):<br>➢ Հիմնադրվել է «Թրանսփորընսի ինթերնեյշնլ»-ի երկրի մասնաճյուղը:<br>➢ 2001-2002թթ. ընդունվեցին «Քաղաքացիական ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» և «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքները: | |
| *II. Մուտքը Հայաստան* | | | |
| 2.1 | Ստեղծել *հաղորդակցման բարելավված ուղիներ:*<br>➢ Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է որպես միջոց օգտագործվեն հյուպատոսությունների միջև բոլոր հյուպատոսական ծառայությունների և վճարների միասնական կարգի հաստատման և կարգավորման համար:<br>➢ Դրանց միջոցով նաև կապ պետք է հաստատվի հյուպատոսությունների և ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների բաժնի միջև՝ վերացնելու համար ընթացակարգային անտեղի կրկնության գործառույթները: | ➢ **E-visa** համակարգը կազմավորվել և դրա առաջին փուլն իրականացվել է պարզեցնելու և հստակեցնելու վիզայի համար դիմելու և վիզան ստանալու գործընթացը: 2002թ. նոյեմբերից on-line համակարգը՝ Հայաստան այցելել ցանկացող օտարերկրյա քաղաքացիներին հնարավորություն տվեց վիզայի համար դիմումը ներկայացնել և վճարումը կատարել ինտերնետի միջոցով և ստանալ վիզան երկու աշխատանքային օրվա ընթացքում:<br>➢ **E-հյուպատոսությունը,** E-visa-ի հետագա զարգացումն է, որը կարագացնի և առավել արդյունավետ կդարձնի որոշ հյուպատոսական ծառայությունների մատուցումը և Հայաստանի, և այլ պետությունների քաղաքացիներին՝ առանց ՀՀ ԱԳՆ կամ արտերկրում ՀՀ հյուպատոսություններ այցելելու անհրաժեշտության: Վերջում, այս համակարգի միջոցով կիրականացվեն ՀՀ ԱԳՆ այն ծառայությունները, որոնք հնարավոր է on-line եղանակով մատուցել: | |
| 2.2 | *Մշակել և տարածել վստահելի ուղեցույցներ:*<br><br>➢ Ընթացակարգերի նկարագրություններով ուղեցույցները պետք է հասանելի լինեն հյուպատոսություններում և ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների բաժնում:<br>➢ Պաշտոնյաների մոտ պետք է ընթացակարգերի ուղեցույցներ լինեն, որոնք նրանց հնարավորություն կտան վիզայի կամ կացության թույլտվության համար դիմած ներդրողներին հստակ և սպառիչ ուղղություններ ցույց տալ: | ➢ Արտերկրում ՀՀ դեսպանատներում և հյուպատոսություններում առկա են մանրամասն ուղեցույցներ՝ հյուպատոսական ծառայությունների նկարագրություններով՝ նարառյալ վճարներն ու տևողությունները, ինչպես նաև ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը:<br>➢ Նույն տեղեկատվությունը տեղադրված է նաև ՀՀ ԱԳՆ պաշտոնական ինտերնետային էջում (www.armeniaforeignministry.com), ինչպես նաև ՀՀ դեսպանատների և հյուպատոսությունների ինտերնետային էջերում (ամբողջական ցանկը տեղադրված է ՀՀ ԱԳՆ ինտերնետային էջում): | |

| | | | |
|---|---|---|---|
| 2.3 | *Կատարողականների գնահատման համակարգի ձևավորում:*<br>➢ Կատարողականների գնահատման համակարգի ընդունմամբ ՀՀ ոստիկանության պաշտոնյաներն իրենց ենթակաների համար գործնական խթանիչ համակարգ կարող են ապահովել՝ միաժամանակաբար արդյունավետորեն համակարգելով ծառայությունների մատուցման ճշտապահությունն ու արդյունավետությունը: | ➢ Կատարողականների գնահատականի համակարգը ներդրվեց « Ոստիկանական ծառայության մասին» և «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքների ընդունմամբ, որոնցով ներդրվեց աշխատակիցների համար տույժերի և խրախուսումների համակարգ, ինչպես նաև ապահովվեց ծառայությունների մատուցման արդյունավետության կառավարումը: | |

| | | | |
|---|---|---|---|
| *III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ* | | | |
| **Ընկերության հիմնադրումը և գրանցումը** | | | |
| 3.1.1 | *Գրանցման ընթացակարգերի և պահանջների դյուրինություն և թափանցիկություն:*<br>➢ Կառավարությունը պետք է ջանքեր գործադրի գործընթացի պարզեցման ուղղությամբ և նվազագույնին հասցնի պահանջվող քայլերն ու պահանջները:<br>➢ Կառավարությունը պետք է փորձի վերացնել ընկերությունների գրանցման գործընթացը կանոնակարգող օրենքների մեջ առկա տարընթերցումները:<br>➢ Ընկերությունների գրանցման պահանջները և դրանց իրականացման ժանկետները պետք է հանրորեն մատչելի եղանակով տեղադրվեն ընկերությունների գրանցման մարմինների գրասենյակներում: | ➢ 2001թ.-ի ապրիլի 3-ին «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (29/05/2002 և 06/11/2002 փոփոխություններով) ընդունմամբ իրականություն դարձավ ընկերությունների գրանցումը Երևանում 2-3 օրվա և մարզերում՝ 5-7 օրվա ընթացքում:<br>➢ Սա հնարավոր դարձավ շնորհիվ այն բանի, որ դիմողն այլևս առանձին չի դիմում ընկերության անվանման գրանցման համար, ինչպես նաև ընթացակարգի հստակեցման և պարզեցման շնորհիվ:<br>➢ Պարզեցվեց նաև լուծարման գրանցման ընթացակարգը: Այժմ դիմողը պետք է դիմի միայն պետական ռեգիստր, մինչդեռ նախկինում նա պետք է ՀՀ հարկային ծառայության և ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք ներկայացներ: | ➢ Համաձայն ՀԲ “Ձեռնարկատիրական գործունեության իրականացումը 2003-ին”, ընկերության գրանցումը Հայաստանում տևում է 7 օր:<br>➢ Համաձայն «Վարչական և կանոնակարգիչ ծախսերի հետազոտության», ընկերության գրանցումը գնահատվում է, առավել նվազ պրոբլեմայնության խնդիր: Ընկերություններից միայն **8.3%**-են այս խնդիրը որպես լուրջ (միջին կամ մեծ) խոչընդոտ համարում: Միջին ցուցանիշը **1.23** է չորս նիշանոց սանդղակով, որտեղ 1-ը խոչընդոտի բացակայությունն է, 2-ը ոչ բարդ խոչընդոտ, 3-ը միջին բարդության խոչընդոտ, 4-ը մեծ խոչընդոտ: |

| | | | |
|---|---|---|---|
| 3.1.2 | *Հզորացնել իրավական պաշտպանության մեխանիզմը:*<br>➢ Ներդրողների մոտ վստահություն ձևավորելու և ընկերության գրանցման վկայականի ձեռք բերման հետ կապված երկար ձգձգումները նվազեցնելու համար՝ ՀՀ կառավարությանը անհրաժեշտ է հզորացնել իրավական պաշտպանության համակարգը հիմնելով հատուկ դատարաններ և/կամ դատավորների համար կազմակերպելով վերապատրաստման խորացված դասընթացներ: | ➢ Տես վերևի՝ 1.5 մասը: | |
| 3.1.3 | *Վերացնել ընկերության կնիքի օգտագործման պահանջը:* | ➢ Անավարտ է:<br>*Ներկայումս չկա որևէ միասնական օրենսդրական ակտ, որում կսահմանվեր ընկերության կնիքի առկայության պահանջը տարբեր տեսակի գործառնությունների ժամանակ: Հիշատակված խոչընդոտը մեծամասամբ պայմանավորված է* | ➢ <ins>**Առաջարկություն**</ins>.<br>Խնդիրը կարող է լուծվել «Իավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ |

| | | | |
|---|---|---|---|
| | | *վարքագծային գործոնով, քանի որ գործընկերները իրենց ավելի «բավարարված և հանգիստ են» զգում, երբ համապատասխան փաստաթղթերը կնքված են:* | կատարելով, որով կառաջադրվի ՀՀ պետական ռեգիստորում ստեղծել ընկերությունների ներկայացուցիչների ստորագրությունների նմուշնեի տվյալների բազա: Համապատասխանաբար, լրացումներ կարվեն ընկերություննների կանոնադրությունների մեջ համապատասխան հավելվածների միջոցով, որոնցով կհաստատվեն ստորագրությունների նմուշները: |
| | **Լիցենզավորումը՝ ըստ ոլորտների** | | |
| **3.2.1** | *Թույլտարել բանկային և ապահավագրական ոլորտներում հավաստագրման անցկացումը օտար լեզուներով:* | ➢ Ավարտված չէ: | |
| **3.2.2** | *Միասնականացնել հանքարդյունաբերության ոլորտի լիցենզավորման գործընթացը:*<br><br>➢ ՀՀ կառավարության կողմից՝ հանքարդյունաբերության ոլորտի գործունեության լիցենզավորման միասնականացումը պետք է ենթադրի դրա իրականացումը մեկ մարմնի ներքո: Տարբեր մարմինների կողմից հաստատումները կարող են կատարվել այս մարմնի միջոցով:<br><br>➢ Միասնականացմանը զուգընթաց պետք է մշակվեն և ձևավորվեն համակարգման և համագործակցության փոխկապակցված և ինստիտուտացված ընթացակարգեր: | ➢ 2001թ. աշնանը ընդունվեց «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեցին հանածոների շահագործման և ընդերքի օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը, ՀՀ տարածքում հանքարդյունահանման կարգը, ինչպես նաև կանոնակարգվեցին բոլոր այն իրավահարաբերությունները, որոնք բխում էին, առաջանում էին, կամ որևէ կերպ կապված էին հանքարդյունահանման իրավունքների իրագործման հետ:<br><br>➢ Կոնցեսիաների մասին օրենքի ընդունման հետ իրականացվեց.<br><br>1. Ռացիոնալիզացվեց ոլորտը կանոնակարգող ամբողջ օրենսդրությունը և ինստիտուցիոնալ կազմակերպումը (ամենակարևորը, ընդունվեցին կոնցեսիայի և կայունացման պայմանագրերի օրինակելի նմուշները):<br>2. Հիմնադրվեց կոնցեսիոն գործակալությունը, որը համաձայն Կոնցեսիաների մասին օրենքի, ՀՀ տարածքում հանքարդյունաբերական գործունեության ոլորտը կանոնակարգող միակ մարմինն է լինելու:<br>3. Նշանակալիորեն ռացիոնալիզացվեցին լիցենզավորման ընթացակարգերը: | ➢ Հանքարդյունաբերության ոլորտի կանոնակարգիչ և կազմակերպական դաշտը արդիակա-նացնելու ՀՀ կառավարության ջանքերի արդյոնքում 2003թ. դեկտեմբերին Հայաստանը պարգևատրվեց «Հանքարդյունաբերու-թյան ոլորտում քաղաքականության մշակման և ձևավորման բացառիկ նվաճումներ - երկրի մրցանակ» մրցանակին, ինչը հայտարարվեց «Մայնինգ Ջորնալ»-ի կոմղից կազմակերպված “Հանքեր և Փողեր» կոնգրեսի շրջանակներում: |
| **3.2.3** | *Ուղեցույցների մշակում և ընթացակարգերի միասնականության և կայունության ապահովման պարտավորության ստանձնում:*<br>➢ Կառավարության կողմից պետք է հստակ, հակիրճ և թափանցիկ ուղեցույցներ տպագրվեն, որոնցում կնկարագրվեն ընթացակարգային և փաստաթղթային պահանջները: Ուղեցույցներում հստակորեն պետք է նշվեն բոլոր լիցենզիաների տեսակները, դրանցից յուրաքանչյուրի համար պատասխանատու | ➢ Ընթացակարգերի մանրամասն նկարագրությունը տեղադրված է<br>http://www.licensing.am և<br>http://www.mfe.gov.am ինտերնետային էջերում: | |

| | | | |
|---|---|---|---|
| | մարմինները, վճարները և տրամադրման ժամկետները:<br><br>➢ Կառավարությունը պետք է պարտավորություն ստանձնի ընթացակարգերի և լիցենզիաների համար, ինչպես նաև կանոնները բավարարել փորձող ներդրողի համար սահմանափակի անորոշությունը և անկայունությունը:<br><br>➢ Ընթացակարգերին և կանոնակարգերին վերաբերող ցանկացած փոփոխություններ պետք է հայտարարվեն մինչև դրանց ուժի մեջ մտնելը: | ➢ 2001թ. մարտին ընդունվեց և 2001թ. հուլիսից ուժի մեջ մտավ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը:<br>➢ Օրենքով սահմանվում են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները, լիցենզիաների տրամադրման իրավունք ունեցող պետական մարմինները, ինչպես նաև կանոնակարգվում են լիցենզավորման հետ կապված բոլոր ընթացակարգերը:<br><br>➢ Օրենքով սահմանված են լիցենզավորման ընթացակարգերի երկու տեսակներ՝ պարզ և բարդ: Պարզ ընթացակարգով լիցենզիաները տրամադրվում են առանց մասնագիտացված հանձնաժողովներ կազմավորելու՝ իրավասու մարմին լրացված դիմումը ներկայացնելուց հետո երեք օրվա ընթացքում: Բարդ ընթացակարգով լիցենզիայի դեպքում դրա տրամադրումը նախատեսված է իրավասու մարմին լրացված դիմումը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Այս դեպքում լիցենզիաները տրամարդվում են իրավասու մարմիններում կազմավորված մասնագիտացված հանձնաժողովները: Հանձնաժողովների նիստերը բաց են և պետք է հայտարարվեն դրանց անցկացման օրվանից հինգ օր առաջ, սակայն որոշումները ընդունվում են փակ նիստերի ընթացքում:<br><br>➢ Կատարված է: | |
| | *Հայաստանի հարկային համակարգը* | | |
| 3.3.1 | *Օրենսդրության պարզեցում և դրա կիրառման ուժեղացում:*<br>➢ Հայաստանի հարկային համակարգի բարեփոխման որպես առաջին քայլ, կառավարությունը որոշակի քայլեր պետք է ձեռնարկի օրենսդրության հետագա պարզեցման, և ինչը առավել կարևոր է՝ դրա կիրառման ամրապնդման ուղղությամբ:<br>➢ Կառավարությունը պետք է բարեփոխի այն օրենքները, որոնցում հարկային ծառայության պաշտոնյաների հայեցողական գործողություններին առնչվող հսկողական դրույթներ են պարունակվում:<br>➢ Ստուգումների ընթացակարգերի բարելավման հետ մեկտեղ, կառավարությունը որոշակի քայլեր պետք է ձեռնարկի ստեղծելու վստահելի համակարգ, որը հարկային մարմիններին հնարավորություն կտա բողոքներն ու դժգոհությունները արդար և թափանցիկ կերպով բավարարել օրենքով սահմանված ժամկետներում:<br>➢ Հանրորեն մատչելի, հստակ ուղեցույցներով պետք է սահամնված լինեն բողոքների քննարկման ընթացակարգերը՝ ուշադրությունը բևեռելով դրանց չպահպանման դեպքում պաշտոնյաների համար խիստ հետևանքների սահմանման վրա: | ➢ 2003թ. հունիսին կառավարության թիվ 635 որոշմամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ այլ նախարարությունների մասնակցությամբ, հանձնարարվել է մշակել Հարկային օրենսգիրք, և արդեն իսկ նախաձեռնվել են որոշ նախապատրաստական աշխատանքներ:<br>➢ 2002թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են հարկային ծառայության պաշտոնյաների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև վարքագծի չափանիշները: Այս օրենքն ապահովեց նաև իրավական հիմք, հարկային ծառայության համար մշակելու պաշտոնական կարգեր, որոնցով հաստատվեցին կարգապահական կանոնները՝ ներառյալ Ղեկավարի պարտավորությունները այդ կանոններն իրագործելու համար:<br>➢ Հարկային ծառայության կողմից այս նորմերը ընդունվեցին 2002թ.-ի աշնանը: «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով ապահովվեց նաև Հարկային ծառայության հետաքննության հանձնաժողովի ստեղծումը, որը պետք է հետաքննի կարգապահական խախտումները: | |
| 3.3.2 | *Կառուցվածքային կարողությունների հզորացում:*<br>Համատարած բարեփոխումների գործընթացում երկրորդ քայլը հարկային վարչարարության արտադրողականության և արդյունավետության բարձրացումն է՝ ՀՀ հարկային պետական ծառայության կառուցվածքային կարողությունների հզորացման միջոցով: | | |

| | | | |
|---|---|---|---|
| | Այս ոլորտում մի քանի ուղղություններ կան, որոնց կառավարությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի.<br>➢ Մարդկանց միջոցով իրականացվող գործողությունների փոխարինումը համակարգչային համակարգի միջոցով իրականացվող գործողություններով: Կառավարության ջանքերը պետք է կենտրոնացվեն մի քանի հիմնական ուղղություններում` ներառյալ ընկերությունների գրանցման ընթացակարգերում ընդգրկված տարբեր մարմինների միջև կապի ապահովումը` խուսափելու համար պահանջվող տեղեկատվության կրկնողությունից և նվազեցնելու համար մարդկանց միջոցով փաստաթղթերի կրկնակի ստուգումները:<br><br>➢ Նվազեցնել օրենքների ընդունման, արդեն գործող օրենքներում փոփոխությունների կատարման և օրենքների կիրառման միջև ընկած ժամանակահատվածը:<br><br>➢ Կառավարությունը բոլոր հարկային տեսչություններում հաճախորդների սպասարկման միավորներ կամ պատուհաններ պետք է ստեղծի, որոնք ձեռնամուխ կլինեն փոփոխության ենթարկվող պահանջների վերաբերյալ հարկ վճարողներին անհրաժեշտ ամբողջական տեղեկատվության տրամադրմանը և կօժանդակեն նրանց հարկային փաստաթղթերի լրացման գործում: | ➢ Վերջին մի քանի տարիների ընթացքում նշանակալի առաջընթաց է տեղի ունեցել հարկային վարչական համակարգի համակարգիչներով հագեցման և համակարգիչների օգտագործման ավելացման ոլորտում` հարկային, ֆինանսական և մաքսային բարեփոխումների ծրագրերի շրջանակում ԱՄՆ միջազգային զարգացման գրասենյակի ֆինանսական օժանդակության շնորհիվ:<br><br>➢ Կատարված է:<br><br>➢ Հարկային, ֆինանսական և մաքսային բարեփոխումների ծրագրերի օժանդակությամբ, Հարկային պետական ծառայությունը պարզեցված հարկային ուղեցույցներ է հրատարակում (մինչ օրս հրատարակվել են երեք ուղեցույցներ): Համապատասխան տեղեկատվությունը տեղադրված են նաև www.taxcervise.am և www.taxinfo.am ինտերնետային էջերում: | |
| 3.3.3 | *Վերացնել «ստուգումների միջոցով ճնշման» համակարգը* | ➢ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում կատարված 14/12/2001 և 06/11/2002 փոփոխությունները նպատակ ունեին հստակեցնել և սահմանափակել հարկային և այլ պետական մարմինների կողմից տնտեսվարող սուբյեկտներում իրականացվող ստուգումների և ուսումնասի-րությունների ընթացակարգերը: | |
| 3.3.4 | *Ստեղծել հարկերի հետ վերադարձման արդյունավետ մեխանիզմներ:* | ➢ 2002թ. օգոստոսի 1-ի ՀՀ կառավարության թիվ 653 որոշմամբ հստակեցվեց և պարզեցվեց ԱԱՀ զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով հետ վերադարձման ենթակա ԱԱՀ-ի չափը հավաստող և հիմնավորող տեղեկանքի տրամադրման ընթացակարգը, որով նշանակալիորեն բարելավվեց ԱԱՀ հետ վերադարձման մեխանիզմը, որի արդյունքում, ԱԱՀ գծով պետական բյուջեի պարտքը նվազեց ավելի քան տասն անգամ: Հարկ է նշել, որ իրավիճակը ՀՀ կառավարության շարունակական ուշադրության կենտրոնում է: ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 2-ի N 1923-Ն որոշմամբ ընդունվեց նոր կարգը, որը նախկինի համեմատ էականորեն պարզեցրել է վերոհիշյալ գործընթացը: | |

| | | | |
|---|---|---|---|
| | *IV. ՏԵՂԱԿԱՅՈՒՄ* | | |
| | *<u>Սեփականության իրավունքների պետական գրանցումը</u>* | | |
| 4.1.0 | ➢ Հայաստանի կառավարությունը որոշ դրական քայլեր է իրականացրել` թույլատրելով օտարերկրյա մասնակցությամբ ընկերություններին սեփականության իրավունքով հող ձեռք բերել: Չնայած սրան, հողի ձեռք բերումը, օգտագործումը և անշարժ գույքի | ➢ Իրավաբանական անձիք, որոնք ամբողջովին կամ մասնակիորեն պատկանում են օտարերկրացիներին կամ միջազգային կազմակերպություններին` իրավունք ունեն Հայաստանում սեփականության իրավունքով հող ձեռք բերել: | |

| | | | |
|---|---|---|---|
| | սեփականությունը կանոնակարգող օրենսդրությունը կարիք ունի հետագա հստակեցման և ներդաշնակեցման՝ օտարերկրյա ներդրումների առավել մեծ ծավալներ խրախուսելու համար: | ➢ Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձիք իրավունք ունեն հողի երկարաժամկետ վարձակալության (մինչև 25 տարի՝ գյուղա-տնտեսական նպատակների համար և 99 տարի՝ բոլոր այլ նպատակների համար): Վարձակալության ժամկետն ավարտվելուց հետո, վարձակալողն առաջնահերթ իրավունք ունի վարձակալության երկարացման համար: | |
| 4.1.1 | *Վերափոխել սեփականության գրանցման ընթացակարգերը:*<br><br>➢ Հողի սեփականության գրանցման ընթացակարգերում իրավական անորոշություններն ու խոչընդոտները վերացնելուց բացի, Հայաստանի կառավարության համար նպատակահարմար կլիներ նորովի դիտարկել  ներկա գրանցման ընթացակարգերը, նույնիսկ հաշվի առնելով վերջերս տեղի ունեցած բարեփոխումները:<br><br>➢ Կառավարությունը պետք է վերացնի այն ընթացակարգերը, որոնք բացի Կադաստրի պետական կոմիտեից կարող են իրականացվել այլ գործակալությունների կողմից: Օրինակ՝ գույքի գնահատման խնդիրներն ավելի համահունչ են հարկահավաքման խնդիրներին և պետք է իրականացվեն հարկային ծառայության հսկողության ներքո: Նմանապես, դիտարկման միջոցով ապօրինի շինարարության հայտնաբերման պահանջը պետք է իրականացվի ոչ թե սեփականության իրավունքի գրանցման վկայականի ստացման ժամանակ, այլ տարածքի օգտագործման և կառուցապատման թույլտվության հաստատման ժամանակ: | ➢ 2001թ. հունիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ հողային օրենսգիրքը հողի հետ կապված խնդիրները կանոնակարգող հիմնական իրավական ակտ հռչակվեց, որով վերացվեցին նաև այն իրավական անորոշություններն ու խոչընդոտները, որոնք առաջանում էին բազմաթիվ իրավական ակտերի առաջ բերած խառնաշփոթի հետևանքով:<br>➢ Համապատասխանաբար կրճատվեցին գրանցման և տեղեկատվության տրամադրման ժամկետները, նվազեցվեցին դրանց հետ կապված վճարներն ու տուրքերը, ՀՀ կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների գործառույթների համար ներմուծվեց «մեկ կանգառի պատուհան» սկզբունքը:<br>➢ ՀՀ հողային օրենսգրքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքներին փոխանցվեցին հողի հարկի և գույքահարկի հավաքագրման իրավասությունները: Նախատեսվեց, որ հողակտորների և շինությունների գնահատման վերաբերյալ համապատասխան տվյալները ՀՀ կադաստրի պետական կոմիտեն կփոխանցի համայնքներին և հարկային մարմիններին: | ➢ ՀՀ-ում ընդունված է անշարժ գույքի միասնական կադաստրի սկզբունքը: Այս սկզբունքի համաձայն՝ հարկահավաքագրման նպատակով անշարժ գույքի գնահատումը համարվում է անշարժ գույքի կադաստրը վարելու լիազորված մարմնի հիմնական գործառույթը:<br><br>➢ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ հարկային պետական ծառայությունն է լիազորված վերոհիշյալ գնահատումը վերահսկելու համար: |
| 4.1.2 | Բարեփոխել *հողի վարձակալության համակարգը՝ ներդրողների համար այն առավել բարենպաստ դարձնելու համար:*<br>Կառավարությունը հատուկ ուշադրություն պետք է դարձնի հողի վարձակալման պայմանագրերի տևողությանը և փոխանցելիությանը, ինչպես նաև ներդրողների կողմից վարձակալված հողի ազատ օգտագործմանն այնքան ժամանակ, քանի դեռ դա թույլ են տալիս գործող օրենսդրությունը, գլխավոր հատակագծերը, բնապահպանական նորմերը: Կան հիմնական իրավունքներ, որոնք սովորաբար ներառվում են վարձակալության երկարաժամկետ պայմանագրերում՝ նպատակ ունենալով բավարարել ներդրողների պահանջները:<br>Սրանցից առավել կարևորներից են.<br><br>➢ Վարձակալության հստակ և բավարար ժամկետ: Երկրների մեծ մասում 30-90 տարվա երկարաժամկետ վարձակալություն է թույլատրված, ընդ որում որքան քիչ է մշակված/զարգացած հողը, վարձակալման ժամկետներն ավելի երկար լինելու միտում են ստանում:<br><br>➢ Վարձակալության կամ ենթավարձակալության պայմանագրերի փոխանցելիություն: Ի տարբերություն կարճաժամկետ | ➢ Տես 4.1.0 երկրորդ մասը: | |

| | | | |
|---|---|---|---|
| | վարձակալության, երկարաժամկետ վարձակալության ժամանակ, սովորաբար թույլատրվում է վարձակալությունը փոխանցել երրորդ կողմին, մասնավորապես՝ որպես գրավ վարկատուներին:<br><br>➢ Վարկատուի իրավունքների և շահերի ներառում և պաշտպանություն: Երկարաժամկետ վարձակալության՝ բանկերի կողմից ընդունելիության պատճառով, պայմանագրերում սովորաբար վարկատուները ներառվում են որպես երրորդ կողմ, որը վարկատուներին թույլ է զրկել գրավադրված հողի վարձակալին վարձակալության իրավունքից և վաճառել կամ փոխանցել վարձակալության իրավունքը երրորդ անձանց:<br><br>➢ Վարձակալողի իրավունքը ծրագրել և կազմել հողի օգտագործումը օրենսդրության շրջանակում, որը ներառում է ծրագրերի նախագծերի պատրաստման և ենթավարձակալության տրամադրման ազատությունը: Վարձատուների կողմից նման իրավունքների արգելումը պետք է ամբողջովին արտացոլվի պայմանագրերում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման ցանկացած արգելք նվազեցնում է վարձակալված հողի «օգտագործման արժեքը:<br><br>➢ Վարձակալողի իրավունքը վարձակալված հողում անշարժ գույք կառուցելու և վարձակալության ժամկետի ավարտին այդ սեփականության դիմաց արդար փոխհատուցում ստանալու համար: | ➢ Այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (Գլուխ 13) հողի նկատմամբ իրավունքի ընդհանուր դրույթներ են սահմանվում, ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանվում են հողի վարձակալության իրավունքի առանձնահատկությունները, որոնց համաձայն վարձակալված հողը, հողի սեփականատիրոջ համաձայնությամբ, կարող է գրավադրվել, տրվել ենթավարձակալության, օտարվել և ներդրվել իրավաբանական անձի հիմնադիր կապիտալում: | ➢ Կարգավորվում է վարձակալողի և վարձատուի միջև պայմանագրով:<br><br>➢ Կարգավորվում է վարձակալողի և վարձատուի միջև պայմանագրով: |
| | *<u>Տեղանքի կառուցապատում</u>* | | |
| 4.2.1 | *Տեղանքի կառուցապատման գործընթացի հստակ և թափանցիկ կանոնների և կարգերի սահմանում:*<br><br>➢ ՀՀ քաղաքաշինության նախարարությանն անհրաժեշտ է տեղանքի կառուցապատման գործընթացի հստակ և թափանցիկ կանոններ և կարգեր սահմանել: Այս կանոններն ու կարգերը պետք է պարբերաբար հրատարակվեն և թարմացվեն, և պետք է առկա լինեն բոլոր այն տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններում, որոնք ներգրավված են թույլտվությունների և հաստատումների տրամադրման գործընթացում: | ➢ ՀՀ կառավարության թիվ 91՝ «ՀՀ տարածքում կառուցապատման և շինությունների քանդման թույլտվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» որոշման ուժի մեջ մտնելով, սահմանվեցին ՀՀ տարածքում կառուցապատման և քանդման թույլտվություն տրամադրելու պահանջները և տրամադրման կարգերի և թույլտվությունների տեսակները: Վերոհիշյալ որոշմամբ հաստատված նոր կարգի համաձայն՝ պարզեցվեցին թույլտվության տրամադրման համար պահանջվող ընթացակարգերը, մասնավորապես.<br><br>- Պահանջվող փաստաթղթերի փաթեթները 5-ից նվազեցվեց մինչև 2-ը:<br>- Նախագծի փուլային իրականացման դեպքում, թույլտվությունները հնարավոր դարձավ տրամադրել միջանկյալ նախագծի համապատասխան փաստաթղթերի հիման վրա:<br>- Շինարարական թույլտվության ստացման վերաբերյալ կառուցապատողի կողմից տեղեկատվության ստացման ժամանակահատվածը տասնհինգ օրից նվազեցվեց մինչև երեք օր:<br><br>➢ 2002թ. փետրվարի 2-ի՝ «Քաղաքաշինությանն առնչվող փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին» | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ՀՀ կառավարության թիվ 96 որոշումն ուղղված էր առկա ընթացակարգերի պարզեցմանը: Այս որոշումով սահմանվեցին նաև քաղաքաշինությանն առնչվող փաստաթղթերի փորձաքննություն չպահանջող դեպքերը:<br><br>➢ 2002թ. սեպտեմբերի 29-ի «Ճարտարապետա-շինարարական առաջադրանքի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարու-թյան թիվ 1473-Ն որոշմամբ՝ սահմանվեցին նաև շինությունների կառուցման պարտադիր պայմաններն ու պահանջները և սահմանափակումները: Վերոհիշյալ որոշման համաձայն հաստատվեց «մեկ կանգառի պատուհան» սկզբունքը, որով կառուցապատողը ազատվեց իրար կրկնող գործառույթներով և պահանջներով մի շարք հաստատությունների հետ գործ ունենալու անհրաժեշտությունից: | |
| 4.2.2 | *Հանրապետության ամբողջ տարածքում միասնականացնել տեղանքի կառուցապատման պահանջները:*<br><br>➢ Այս գործընթացում առաջընթացի ապահովման համար կարևոր քայլ կլինի տեղանքի կառուցապատման միասնական ընթացակարգերի մշակումը և դրանց տրամադրումը բոլոր համայնքային մարմինների գրասենյակներին: | ➢ Գործընթացը միասնականացվել է 4.2.1 կետում հիշատակված որոշումներով:<br><br>➢ Դեռևս անավարտ է ընթացակարգային նկարագրությունների և համապատասխան ձևերի մատչելիության ապահովման խնդիրը: | |
| 4.2.3 | Վերացնել ավելորդ թույլտվությունների, հաստատումների և կրկնակի գործողությունների իրականացումը:<br><br>➢ Ներկայումս առկա են մի շարք հաստատումներ, որոնք պահանջվում են տեղանքի կառուցապատման ընթացակարգի բոլոր փուլերում, մասնավորապես՝ անվտանգության և հակահրդեհային, ջրմուղկոյուղու և սանիտարական, էլեկտրականության և հեռախոսացանցի հաստատումները: Ջանքեր են պահանջվում բացահայտելու էական և վերացնելու համար ավելորդ ստուգումներն ու թույլտվությունները՝ տեղանքի կառուցապատման յուրաքանչյուր առանձին փուլի համար: | ➢ Տես վերևի 4.2.1 կետը: | |
| 4.2.4 | *Թույլտվություն տրամադրող յուրաքանչյուր մարմնի համար մշակել դիմումի ստանդարտ ձև և ապահովել դրա տրամադրումը՝ կցելով համապատասխան ուղեցույց:* | ➢ Դիմումի ստանդարտ ձևը հաստատվել է 4.2.1 կետում հիշատակված որոշումներով | ➢ Բացատրական ուղեցույցների հրատարակումը դեռևս անավարտ է (պետք որպես նոր առաջարկություն սահմանվի) |
| 4.2.5 | *Թույլտվությունների տրամադրման ժամկետների սահմանում:* | ➢ Տես վերևի 4.2.1 կետի առաջին մասը: | ➢ Կառավարության մի շարք որոշումների (որոնցից մի քանիսը հիշատակվեցին 4.2.1 կետում) ուժի մեջ մտնելու շնորհիվ բոլոր համապատասխան հաստատումների և թույլտվությունների ստացման ընդհանուր ժամանակահատվածը 310 օրից իջեցվել է granting մինչև 161 օր: |

| | | | |
|---|---|---|---|
| 4.2.6 | Առավել նախընտրելիորեն թույլատրել մանրամասն միջանկյալ նախագծերի ներկայացումը՝ ներկայիս միայն վերջնական նախագծերի փոխարեն:<br><br>➢ Շինարարական ծրագրերի մեկնարկին օժանդակելու համար՝ ՀՀ կառավարությունը պետք է նախատեսի նախագծերի ներկայացումը մաս-առ-մաս, շինարարության տարբեր փուլերի համար տրամադրելով առանձին թույլտվություններ, օրինակ. հողային աշխատանքներ, հիմքի պատրաստում, կառույցների շինարարություն: | ➢ Տես վերևի 4.2.1 կետի առաջին մասը: | |
| *Ենթակառուցվածք* | | | |
| 4.3.1 | ➢ ՀՀ կառավարության համար նպատակահարմար կլիներ շարունակել սեփականաշնորհման իր ներկա ռազմավարությունը և կիրառել այն այլ ոլորտի ենթակառուցվածքների վրա՝ տարածելով այն հնարավորինս լայն շրջանակներով: | ➢ Շարունակվել է արտադրական ենթակառուցվածքների սեփականաշնորհման գործընթացը:<br>➢ 2003թ. հոկտեմբերին միջազգային մրցույթի արդյունքում մասնավորեցվեցին Հայաստանի էլեկտրական բաշխիչ ցանցերը և ստեղծվեց նոր՝ «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲ ընկերությունը:<br>➢ 2003թ.-ին միջազգային մրցույթում հաղթած իտալական «Էյ-Յութիլիթի» ընկերությունը ստանձնեց «Երևանի Ջրմուղկոյուղի» ՓԲԸ հավատարմագրային կառավարումը: | |
| 4.3.2 | ➢ Կառավարությունը պետք է փորձի գների հաստատման մեխանիզմ սահմանել բոլոր ծառայությունների համար, որոնք թույլ կտան ենթակառուցվածքների համակարգերի շահագործման, սպասարկման և ընդարձակման նպատակով բավարար եկամուտներ ապահովել՝ ծածկելով հաստատուն և փոփոխական ծախքերը:<br><br>➢ Կառավարությունը պետք է դրդի հանրային ծառայություններ մատուցող ընկերություններին նվազեցնել ընկերությունների համար տեղակայման բարձր ծախսերը՝ ներդրումների իրականացմանը նպաստելու համար:<br><br>➢ Հայաստանում էլեկտրականություն մատուցող ընկերությունը պետք է նախատեսի գոնե ստանդարտ տարբերակների սահմանում՝ հնարավորություն ընձեռելով ընկերություններին հետաձգել կամ մաս-մաս վճարել տեղակայման ծախսերը: | ➢ Հանրային ծառայությունների սակագները հաստատվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի կողմից, որը դրա համար օրենքով ստեղծված լիազոր մարմին է: Հանձնաժողովը սակագները հաստատում է հիմնվելով մատակարար ընկերությունների կողմից ներկայացված հիմնավոր հաշվարկների վրա, որոնք ներառում են նաև հաստատուն և փոփոխական ծախսերը:<br><br>➢ Մատակարար ընկերությունները սովորաբար կիրառում են հետևյալ սկզբունքը. բաշխիչ ցանցերին միացման հետ կապված տեղակայման ծախսերը կատարվում են մատակարար, իսկ բոլոր այլ ծախսերը՝ բաժանորդ ընկերությունների հաշվին:<br><br>➢ Այս տարբերակը հիմնականում կիրառվում է ոչ թանկարժեք սարքավորումների տեղակայման պարագայում՝ սպառող ընկերություններին հնարավորություն տալով փակել դրա հետ կապված ծախսերը շահագործման առաջին տարվա ընթացքում, դուրս գրելով սարքավորման ծախսերը մատակարար ընկերությանը վճարվելիք գումարներից: | |

| |
|---|
| *V. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ* |
| *Ներմուծման և Արտահանման ընթացակարգեր* |

| | | | |
|---|---|---|---|
| 5.1.1 | *Ռազմավարական կառավարման ծրագրի մշակում:*<br><br>➢ ՀՀ մաքսային պետական կոմիտեն առավել ուշադրություն պետք է դարձնի ռազմավարական բազմակողմ ծրագրին մաքսային համակարգի արդիականացման համար` աշխատակազմի զարգացման և կառուցվածքային կազմակերպման տեսանկյուններից:<br><br>➢ ՀՀ մաքսային պետական կոմիտեն պետք է ռազմավարական կառավարման ծրագիր մշակի` մաքսային համակարգի բարեփոխումների իրականացման համար: Այն պետք է հիմնված լինի և մշակվի Համաշխարհային մաքսային կազմակերպության (WCO) համագործակցությամբ և հատկապես դրա ախտորոշիչ փորձի վրա: | ➢ 2000թ. մարտ-ապրիլ ամիսներին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Բիըրինգ Փոյնթը» իրականացրել է մաքսային WCO տեսակի ախտորոշիչ ուսումնասիրություն: Ախտորոշիչ ուսումնասիրության հաշվետվության հիման վրա 2001թ.-ին ՀՀ մաքսային պետական կոմիտեի, ԱՄՆ ՄԶԳ և «Բիըրինգ Փոյնթի» միջև համաձայնեցվեց մաքսային համակարգի բարեփոխման եռամյա բազմակողմ ծրագիրը, որի բաղադրիչների մեծ մասի իրականացումը ներկայումս ավարտված է: | |
| 5.1.2 | *Գործընթացի մեջ բոլոր շահագրգիռ կողմերի* ներգրավում:<br><br>➢ Ռազմավարական կառավարման ծրագիրը պետք է զուգահեռ գործի արդեն իսկ իրականացվող համակարգչային հագեցման ջանքերին և, առավելագույնը կլիներ դրա համակցումը կատարողականների բազմակողմ բարելավմանը:<br><br>➢ ՀՀ մաքսային պետական կոմիտեն պետք է կառուցվածքային կարողությունների ծրագիր իրականացնի, որը հիմնված կլինի քաղաքականություն մշակող համապատասխան մարմինների օժանդակության վրա:<br><br>➢ Պետք է փոխվի կառավարումը և ներդրվի գործընթացի էլեկտրոնային կառավարման տեխնիկա:<br><br>➢ Ծրագիրը և դրա գերակայությունները պատշաճ կերպով կազմելու համար անհրաժեշտ է կազմակերպել նպատակային խմբեր, հաճախորդների հարցումներ կամ աշխատանքային խմբեր, որոնցում ներկայացված կլինեն և արտաքին և ներքին բոլոր հնարավոր շահագրգիռ կողմերը: Ետադարձ կապն ապահովելու այս գործառույթը պետք է կառուցվածքային բնույթ ստանա, ապահովելու համար երկարաժամկետ նպատակների նվաճումը: | ➢ Կատարելագործվել և բոլոր մաքսակետերում տեղադրվել է մաքսային ձևակերպումների ASYCUDA համակարգը, տեղակայվել է ընդարձակ ցանց, ստեղծվել է մաքսատան ([www.customs.am](http://www.customs.am)) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով գործող ինտերնետային էջը, որը կանոնավոր կերպով նորացվում է ՀՀ մաքսային պետական կոմիտեի կողմից: Մշակվել և հանրորեն տարածվել են մաքսային օրենսդրության և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությամբ ամփոփ գրքույկներ:<br><br>➢ 2002թ.-ին ընդլայնվել է Մաքսային Խորհրդատվական Կոմիտեի անդամների կազմը, ներգրավելով շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանակ: Կոմիտեի նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ մաքսային պետական կոմիտեի ինտերնետային էջում: | |
| 5.1.3 | *Բազմակողմ վերապատրաստման դասընթացների կազմում:*<br>➢ Բազմակողմ վերապատրաստման դասընթացները պետք է պարբերաբար իրականացվեն և սահմանափակված չլինեն միայն տեխնիկական համակարգերի և ընթացակարգերի վերաբերյալ դասընթացներով, այլ ներառեն նաև կառավարչական և հաճախորդների սպասարկման հմտությունների (ներդրողների կողմից նշված են որպես նշանակալիորեն թերացող կամ բացակայող) տրամադրումը, ինչպես նաև մարդկային կապիտալի զարգացումը:<br><br>➢ Շեշտ պետք է դրվի «ուսուցիչների ուսուցում» դասընթացների անցկացման վրա, որոնց շնորհիվ վերապատրաստման դասընթացները հնարավոր կլինի իրականացնել ներքին ուժերով: | ➢ 2000թ. վերջին և 2001թ. սկզբին «Բիըրինգ Փոյնթի» կողմից մշակվել և մաքսային մարմինների պաշտոնյաների համար անցկացվել են ավելի քան 100 խորացված դասընթացներ` մաքսային գնահատման և դասակարգման վերաբերյալ:<br>➢ 2002թ.-ին Բրիտանիայի միջազգային զարգացման վարչության մաքսային հարցերով խորհրդատուի կողմից վարչարարության իրականացման դասընթացներ անցկացվեցին մաքսային մարմինների պաշտոնյաների համար:<br>➢ Վերոհիշյալ դասընթացների նյութերով և ուղեցույցներով հագեցվեց մաքսային վերապատրաստման կենտրոնը, դրանք հետագա դասընթացների ժամանակ մատուցելու նպատակով:<br>➢ 2002թ.-ին անցկացվեց Մաքսային մարմիններին պահանջվող դասընթացների վերլուծությունը, որի հիման վրա ՀՀ մաքսային պետական կոմիտեի նախագահի կողմից հաստատվեց 2003- | |

| | | | |
|---|---|---|---|
| | | 2004թթ. վերապատրաստման դասընթացների ծրագիրը:<br>➢ Մշակվեց և 2002թ. հուլիսին ՀՀ մաքսային պետական կոմիտեին տրամադրվեց վերապատրաստման դասընթացների արխիվացման համակարգչային փաթեթը: ՀՀ մաքսային պետական կոմիտեն օգտագործում է այդ փաթեթը անձնակազմի բոլոր վերապատրաստումները գրանցելու համար: | |
| 5.1.4 | Բարելավել մաքսային համակարգի արդյունավետությունը: Կառուցվածքային կարողությունների ստեղծման համար ռազմավարական կառավարման ծրագրին զուգընթաց, պետք է իրականացվի նաև կատարողականների բարելավման ծրագիրը՝ յուրացնելով հաստատված միջազգային լավագույն փորձը, ներառյալ.<br><br>➢ Ռիսկերի գնահատում– վերլուծաբանական գործընթաց է, որը օգտագործվում է արտահանման կամ ներմուծման մեկ գործարքը ամբողջովին չգննելու դեպքում փաստացի և թույլատրելի ռիսկը որոշելու համար: Սա ներառում է նաև մաքսազերծման/մաքսավորման ենթակա բեռների ոչ ամբողջովին կամ լրիվ չհայտարարագրված լինելու հավանականության գնահատումը: Ռիսկերի գնահատաման գործոնները ներառում են. ներմուծման ձևը, տուրքերի և հարկերի դրույքաչափերը, ապրանքների տեսակը, նախկին ուսումնասիրություննրեի արդյունքները, տեղափոխման եղանակներն ու երթուղիները:<br><br>➢ Ռազմավարական և գործառնական հետազություն, որը բարձրաստիճան ղեկավարներին կապահովի ընթացիկ և հավանական միտումների, հասարակության անվտանգության սպառնալիքների վերաբերյալ՝ հետագայում քաղաքականությունների, ռազմավարությունների և օրենսդրությանը վերափոխելու հնարավորություն ունեցող պատկերացումներով:<br><br>➢ Տարածքային համակարգում և տարածքային գրասենյակների ինտեգրացում համընդհանուր ռազմավարության մեջ:<br><br>➢ Կառավարման աուդիտ - ապրանքների շարժի քանակական չափում, որը օժանդակում է ռեսուրսների տեղաբաշխմանը և արդյունքների չափմանը: | ➢ 2003թ. մայիսին «Բիըրինգ Փոյնթը» ՀՀ մաքսային պետական կոմիտեին ներկայացրեց ռիսկերի ընտրության համակարգի առողջացման և ռիսկերի գնահատման հետ կապված գործառնական ընթացակարգերի բարելավման, ընտրության նկարագիրների մշակման, զննման և հիմնականում ստուգման համար թիրախների ընտրության բացահայտման վերաբերյալ առաջարկություններ, որոնք ընդունվեցին ՀՀ մաքսային պետական կոմիտեի կողմից և սկսվեցին իրականացվել 2003թ.-ի սեպտեմբերից:<br><br>➢ 2003թ. ապրիլին ավարտվեց ASYCUDA համակարգի կատարելագործումը մաքսատներում և 2003թ. մայիսին ավարտվեց դրա տեղակայումը մաքսակետերում: 2004թ. հունվարին ավարտվեց մաքսային բոլոր գրասենյակները կապող ընդարձակ ցանցի ստեղծումը: | |
| 5.1.5 | *10-օրյա մաքսազերծման կանոնի* վերանայում:<br>➢ Կապված յուրահատուկ ընթացակարգային որոշ կանոնակարգերի հետ, մաքսային մարմինները պետք է նախատեսեն 10-օրյա մաքսազերծման կանոնի վերացումը, կամ գոնե հրաժարվեն տույժերի կիրառումից այն դեպքում, երբ ներկրողը պարզապես հետևել է սահմանված ընթացակարգին:<br>➢ Պետք է հստակորեն սահմանված լինեն սակագների և ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկերը, և աշխատակիցներին պետք է վերապատրաստել դրանց մեկնաբանաման համար: | ➢ Մաքսազերծման 10-օրյա ժամկետի կանոնը համապատասխանում է այլ երկրներում կիրառվող մաքսային պահանջներին (օրինակ՝ ԱՄՆ-ում գործում է 10-օրյա ժամկետի սահմանը մաքսային հայտարարագրերի համար, իսկ Կանադայում գործում է 5-օրյա ժամկետի կանոնը:<br>➢ Սակագները ներկայացված են ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածում, իսկ ԱԱՀ-ով սահմանին չհարկվող ապրանքների ցանկերը սահմանվում են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով: | |

| | | | |
|---|---|---|---|
| 5.1.6 | *Կամայական և տարբերակիչ որոշումների ընդունման* վերացում:<br>➢ Մաքսային մարմինների բարձրագույն ղեկավարությունը պետք է կամայական և տարբերակիչ որոշումների ընդունման վերացման քաղաքականություն ընդունի:<br>➢ Ընթացակարգերում փոփոխությունների կատարումը և նոր կանոնակարգերի ընդունումը պետք է հանրորեն հայտնի լինեն նախքան դրանց կիրառումը:<br>➢ Լավագույնս կլինի, եթե երկխոսություն տեղի ունենա մաքսային մարմինների և մասնավոր հատվածի միջև նախքան օրենսդրության որևէ փոփոխության կամ կանոնակարգերի կիրառումը: | ➢ Տես ներքևի՝ 5.1.8 մասը:<br>➢ Ներկայումս Հայաստանը ԱՀԿ անդամ է և օրենսդրական փոփոխությունները ենթարկվում են ԱՀԿ ծանուցման պահանջներին: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում ստեղծվել և այժմ գործում է ԱՀԿ ծանուցման գործակալությունը:<br>➢ Տես վերևի՝ 5.1.2 մասը: | |
| 5.1.7 | *Ավելացնել ներմուծման գնահատման թափանցիկությունը:*<br>➢ Այս գործընթացի սուբյեկտիվ բնույթը նվազեցնելու համար՝ գնահատման համար պետք է ներդրվի տվյալների համակարգչային բազա: | ➢ Ավարտվել է և տեղակայված է 2003թ. սկզբից: | |
| 5.1.8 | *Մշակել ընթակարգային և կազմակերպական ուղեցույցներ:*<br>➢ Մաքսային մարմինները պետք է նախատեսեն կազմակերպական, ընթացակարգային և վարչակլան խնդիրները ուրվագծող ուղեցույցների փաթեթներ:<br>➢ Ուղեցույցները լավ սահմանված և հարմար եղանակով պետք է տան այն ընթացակարգերի ամփոփ ցուցակը, որոնք առանց դժվարության կարող են վերաճել համընդհանուր Մաքսային Լավագույն Պրակտիկայի Կանոնների: | ➢ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից 2002թ. հուլիսին) իրավական հիմքեր է ստեղծում մաքսային մարմինների պաշտոնյաների համար պաշտոնական կարգապահական կանոնակարգերի սահմանման համար, ներառյալ ՀՀ ՄՊԿ նախագահի պարտավորությունները կարգապահական այդ կանոնակարգերը իրագործելու համար: Օրենքով սահմանվում է նաև Մաքսային ծառայության հետաքրքնության հանձնաժողովի ստեղծումը, որը կհետաքննի կարգապահական խախտումները:<br>➢ «Մաքսային ծառայության մախսն» ՀՀ օրենքը սահմանում է նաև մաքսային ծառայողների իրավունքներն ու պարտականությունները՝ ներառյալ գործելակերպի չափանիշները: 2004թ. մարտին ՀՀ մաքսային պետական կոմիտեի կողմից հաստատվեցին «Գործելակերպի և վարքի կանոնները»՝ հիմնված «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթների վրա:<br>➢ Համաձայն օրենքին, պատրաստվեց և 2003թ. հուլիսին ՀՀ մաքսային պետական կոմիտեի բոլոր ծառայողներին տրամադրվեցին «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքը և բոլոր որոշումներն ու կարգերը պարունակող տեղեկատուներ:<br>➢ Դրանում պարունակվող դրույթները ներառվեցին աշխատողների ատեստավորման ընթացքում անցկացվող քննության հարցաշարերում: Այդ ատեստավորումը կազմակերպվել է ՀՀ մաքսային պետական կոմիտեի կողմից 2003թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում: | |
| 5.1.9 | *Արագացնել համակարգիչներով հագեցման ջանքերը:*<br>ՀՀ կառավարությանը, դոնորների օժանդակությանը համընթաց, սկսել է մաքսային մարմինների համակարգիչներով հագեցման գործընթացը: | ➢ 2004թ. ապրիլի դրությամբ ավարտված էր մաքսային ձևակերպումների համակարգչային ASYCUDA համակարգի կատարելագործումը, դրա տեղակայումը մաքսային բոլոր գրասենյակներում, որոնցում տեղադրվեցին համակարգիչներ, բոլոր մաքսային գրասենյակները կապվեցին համընդհանուր ցանցով, բոլոր մաքսային ծառայողները վերապատրաստվեցին համակարգից օգտվելու համար, ավարտվեցին սպառիչ տեխնիկական և ընթացակարգային ուղեցույցների մշակումները: | |

| | | | |
|---|---|---|---|
| | *Ստանդարտացում և հավաստագրում* | | |
| 5.2.1 | *Մասնավոր հատվածի* ներգրավում<br>➢ Պետք է հիմնադրվեն մասնավոր հատվածի ներգրավմամբ տեխնիկական հանձնաժողովներ:<br>➢ Հավաստագրման և ստանդարտացման մարմինների համար թափանցիկությունը պետք է գործնական նպատակ դառնա: | ➢ Մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներգրավվեցին համապատասխան տեխնիկական հանձնաժողովներում:<br>➢ Կատարված է, տես ներքևի 5.2.2 կետը: | |
| 5.2.2 | *Ստանդարտների ներմուծման ընթացակարգի վերանայում:*<br>➢ Նախորդ հատվածում քննարկված մաքսային գործառույթների ուժեղացման հետ միասին կառավարությունն այդ ամբողջ գործընթացի իրականացումը կարող է տարածել նաև ստանդարտների նկատմամբ:<br>➢ Ռիսկերի գնահատման ռազմավարության վրա հիմնված մանրակրկիտ իրականացված վերլուծությունը կարող է օգտակար լինել սրա համար: Դրա նպատակը կլինի գործընթացի համակարգչայնացումը՝ նպատակ ունենալով ներդողների համար այն առավել բարենպաստ դարձնել: | ➢ Նախքան ԱՀԿ անդամակցումը գնահատվեց կանոնակարգման համապատասխան դաշտը և այն համապատասխանեցվեց ԱՀԿ կանոններին:<br>➢ Միջազգային խորհրդատվության ներգրավմամբ մշակվել է երեք օրենքներից բաղկացած օրենսդրական փաթեթ, որն արդեն առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից: Նշված օրենսդրական փաթեթով ապահովվում է ստանդարտացման և չափագիտության, ինչպես նաև համապատասխանության հավաստման ընթացակարգերի կանոնավոր և ամբողջական կանոնակարգումը:<br>➢ Համաշխարհային բանկի հետ բանակցված, 2004թ. 4-րդ եռամսյակում մեկնարկող «Պետական հատվածի արդիականացման» վարկի շրջանակներում նշանակալի ֆինանսական միջոցներ են տեղաբաշխվում համապատասխան գործակալությունների կարողությունների կերտման խնդիրների լուծման համար: | |
| 5.2.3 | *Հզորացնել կառուցվածքային կարողությունները:*<br>➢ Աշխատակիցների համար միջազգային ստանդարտների կիրառման և հաճախորդների սպասարկման բազմակողմ դասընթացների կազմակերպում պետք է նախաձեռնվի:<br>➢ Հավաստագրման և ստանդարտացման մարմինների համար պետք է օգտակար լինի կատարողականների գնահատման ներքին քաղաքականությունը:<br>➢ «Նորությունների մամլո հաղորդագրությունը» կամ հանրային իրազեկման այլ ձևերը նշանակալիորեն կբարձրացնեն թափանցիկությունը և կավելացնեն պետության և մասնավոր հատվածի միջև արդյունավետ երկխոսության իրականացման ներուժը:<br>➢ Ի լրումն սրան, ներդրողները պետք է ստանդարտների վերաբերյալ արագ տեղեկատվություն ստանալու հնարավորություն ունենան և այն պետք է տրամադրվի հավաստագրման չափորոշիչների հետ մեկտեղ: | ➢ Միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից, ինչպես նաև ներքին ուժերով՝ պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ:<br>➢ Պարբերաբար հրատարակվում են նորությունների մամլո հաղորդագրություններ, որոնք տեղադրվում են նաև Որակի և ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային եջում (www.sarm.am):<br>➢ Կատարված է: | |

| | | | |
|---|---|---|---|
| | *Աշխատանքային օրենսգիրք:* | | |
| 5.3.1 | *Մասնավոր հատվածի ներգրավում բարեփոխումների գործընթացի մեջ:*<br><br>➢ Աշխատանքային նոր օրենսգրքի մշակման ժամանակ քննարկումները և խորհրդակցությունները բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ չեն իրականացվել: ՀՀ կառավարությունը համաձայնեցված ջանքեր պետք է գործադրի բոլոր շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ կազմակերպելու համար, մասնավորապես՝ մասնավոր հատվածի հետ: | ➢ ՀՀ կառավարությունում և Ազգային Ժողովում երկար քննարկումներից հետո ՀՀ աշխատանքային օրենսգիրքը ընդունվել է առաջին ընթերցմամբ:<br><br>➢ Նախագծի բարելավման նպատակով և պետական, և մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավմամբ լայն քննարկումներ են կազմակերպվել ՀՀ Ազգային Ժողովում, որոնք հնարավորություն ընձեռեցին շահագրգիռ կողմերի կարծիքներ հնարավորինս առավելագույն կերպով հաշվի առնել:<br>➢ Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը ենթարկվել է միջազգային փորձաքննության և դրա ընդունմամբ ՀՀ-ում աշխատանքային հարաբերությունները կհամապատասխանեն այս ոլորտի միջազգային չափանիշներին:<br>➢ Օրենսգրքով կանոնակարգվում են կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերու-թյունները, սահմանվում են դրանց ծագման հիմքերը, այդ հարաբերությունների փոփոխություններն ու դադարեցումը, դրանց իրականացման ընթացակարգերը, իրավունքի կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աշխատողների անվտանգության և առողջության ապահովման պայմանները՝ քաղաքացիների իրավունքների և ազատությունների, աշխատանքային բարենպաստ  պայմանների ստեղծման օժանդակման, աշխատողների և գործատուների իրավունքների և շահերի պաշտպանության պետական երաշխիքների ստեղծման նպատակով: | |
| 5.3.2 | *Պարտադիր կանոնների վերանայում:*<br><br>➢ Կառավարությունը պետք է նվազեցնի պարտադիր կանոնների քանակը Աշխատանքային օրենսգրքում՝ ներառյալ արտաժամյա աշխատանքին և դրա ժամանակին վերաբերող դրույթները:<br><br>➢ Ընդհանուր առմամբ, կառավարությունը կարող է երկու կողմերի կոլեկտիվ միավորումներին ավելի մեծ դեր տալ, քան սահմանափակել հնարավոր բանակցությունների արդյունքների հնարավորությունը՝ աշխատանքային հարաբերությունների մանրակրկիտ իրավական դրույթներով: | ➢ Տես վերևի 5.3.1 կետը<br><br>➢ Տես վերևի 5.3.1 կետը | |

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 2

## 2000թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՎԱԾԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

# 2000թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

| | |
|---|---|
| **Օրենսդրական միջավայր** | |
| • Հետևողականորեն ներգրավել մասնավոր հատվածին օրենքների և նորմատիվ ակտերի նախագծերի մշակման գործընթացում | • Հետևելով ՀԲ/ՕՆԽԾ առաջարկությանը, 2000թ.-ի դեկտեմբերին ստեղծվեց ՀՀ վարչապետի կողմից գլխավորած Գործարարության աջակցման խորհուրդը: Տնտեսական օրենսդրությանը վերաբերող յուրաքանչյուր նշանակալից իրավական ակտ, մինչև ՀՀ կառավարության կողմից քննարկումը, պետք է անցնի ԳԱԽ-ի կողմից փորձաքննություն:<br>Վերջինս հնարավորություն է ընձեռնել մասնավոր հատվածի ներկայացուցիչներին ներգրավել քաղաքականության փաստաթղթերի և օրենսդրական ակտերի նախագծերի քննարկմանը: |
| • Ապահովել հասարակության համար հասանելի տեղեկատվություն և ուսուցում | • 2000թ.-ից անցած ժամանակահատվածում պետական կառավարման հիմնարկների կողմից ստեղծվեցին նշանակալից քանակությամբ տեղեկատվական ինտերնետային էջեր, ինչպես նաև հրատարակվեցին բազմաթիվ բրոշյուրներ և ուղեցույցներ: Առավելագույն առաջընթաց է արձանագրվել ՀՀ հարկային և մաքսային պետական ծառայությունների կողմից: |
| • Պարզաբանել առկա անհամապատասխանությունները պաշտոնական իրավական կարծիքների հրապարակման, օրենքներում լրացումների կատարման և նոր օրենքների ընդունման միջոցով: | • 2002թ.-ի մայիսի 21-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է իրավական անհամապատասխանությունների լուծման համակարգված մոտեցում, ինչպես նաև պարզաբանում է մեկնաբանությունների իրականացման սկզբունքներն ու եղանակները: Հանդիսանալով աբստրակտ իրավական մեխանիզմ, այնուամենայնիվ հիշատակված ակտը ապահովում է օրենքի գերակայության հիմնական սկզբունքների իրականացումը: |
| • Զարգացնել և դարձնել Հայաստանի դատարանները գերազանց աշխատող օղակներ: | • Նշանակալից զարգացում ապահովեց 2001թ.-ից գործող Տնտեսական դատարանը՝ դառնալով մասնագիտական բանիմացության կենտրոն: |
| *Ներդրողի մուտք* | |
| • Զարգացնել կատարելագործված հաղորդակցման միջոցներ՝ մուտքի արտոնագիր ստանալու ընթացակարգերի իրականացումը արագացնելու նպատակով: | • Ստեղծվեց էլ.-վիզա ստացման համակարգը՝ հնարավորություն ընձեռնելով 2 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել մուտքի արտոնագիր ստանալու ընթացակարգերը: |
| *Գրանցում և լիցենզավորում* | |
| • Մշակել և կատարելագործել գրանցման և լիցենզավորման թափանցիկ ընթացակարգեր, ներառյալ վերջիններիս իրականացման համար ներկայացվող պահանջները և ընթացակարգերը: | • «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ (գործում է 2001թ.-ից) պարզաբանվեց և նշանակալից կերպով պարզեցվեց ՀՀ պետական ռեգիստրում ընկերությունների գրանցման գործընթացը: Այնուամենայնիվ, ընկերությունների ամբողջական գրանցումը դեռևս պահանջելով 5 կառույցների մասնակցություն՝ հետագա պարզեցման և գործառույթների միավորման կարիք ունի:<br>• Նմանապես, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ (գործում է 2001թ.-ից) նույնպես պարզաբանվեցին և նշանակալից կերպով բարելավվեցին լիցենզավորման ընթացակարգերը: |
| **Հողահատկացում և տեղանքի կառուցապատում** | |
| • Մշակել հողի նկատմամբ սեփականության և այլ իրավունքների պետական գրանցման ընթացակարգ: | • 2001թ.-ին նոր Հողային օրենսգրքի ընդունմամբ ՀՀ-ում միասնականացվեցին և դյուրին դարձվեցին հողի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերը, որոնք միատեսակ են բոլոր համայնքների համար: |
| • Պետական սեփականություն հանդիսացող հողերը ենթակա են գնահատման և դրանց կառավարումը իրականացվում է համայնքային իշխանությունների կողմից: | • Պետական սեփականություն հանդիսացող հողատարածքների կառավարման գործընթացը ապակենտրոնացվել է՝ համայնքային իշխանություններին հիշատակված գույքի օտարման կամ վարձակալության լիազորությունների պատվիրակմամբ: ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մշակվել է հողերի վաճառքի և/կամ վարձակալության նպատակով գույքի գնահատման մեթոդաբանություն, որը դրույքաչափերի ստանդարտացման եղանակի կիրառմամբ ապահովում է համակարգի թափանցիկությունը և հաշվետվելիությունը: |

| | |
|---|---|
| • Վերակազմավորել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կառուցվածքը | • ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կառուցվածքը վերանայվել և բարեփոխվել է: Կոմիտեի տարածաշրջանային միավորների ստեղծման միջոցով դյուրին և հասանելի է դարձվել ներդրողի կողմից հողի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի իրականացումը: |
| • Բարեփոխել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը և մշակել դրա իրականացման համար գանձվող վճարների միասնական համակարգ: | • Պարզեցվել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համակարգը և ընթացակարգերը: Ներդրողը այլևս պարտադրված չէ գործ ունենալ ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մի շարք ստորաբաժանումների հետ (Գնահատման, Գրանցման և Վարչական բաժանմունքներ): Անշարժ գույքի նկատմամբ տարբեր իրավունքների պետական գրանցման իրականացման և վճարների գանձման նպատակով գործադրվել է լավագույն փորձին համապատասխանող մեկ կանգառի պատուհանի սկզբունքով աշխատող վարչական բաժանմունքը: Արագընթաց համակարգի կիրառումը հնարավորություն է ընձեռել ներդրողին ստանալ հավաստագրերը 3-15 աշխատանքային օրերի ընթացքում: |
| • Մասնավորեցնել հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները: | • 1999թ.-ից սկսած մասնավորեցվել են հեռախոսային, էլեկտրականության, ջրի և կոյուղու մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունները: Մասնավորեցված բոլոր ընկերությունները ներդրել են մեկ կանգառի պատուհանի սկզբունքով գործող ընթացակարգ և հասարակությանը և ներդրողներին առավելագույնս մատչելիություն ապահովելու նպատակով բացել են տարածաշրջանային գրասենյակներ: Միաժամանակ, սկսվել է հին ենթակառուցվածքների արդիականացման նպատակով ներդրումների իրականացման գործընթացը: |
| **Հարկային վարչարարություն** | |
| • Փոքր ձեռնարկությունների պահանջներին ուղղորդված հարկային ընթացակարգերի պարզեցում | • Փոքր ձեռնարկությունների հարկային բեռի և հաշվետվելիության պահանջների նվազեցման նպատակով 2000թ.-ին ընդունվեց ԱԱՀ-ին և շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող այլընտրանքը՝ պարզեցված հարկը: Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը համարվում են պարզեցված հարկ վճարողներ, եթե նախորդ հաշվետու տարվա ընթացքում դրանց կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների վաճառքի ընդհանուր շրջանառության ծավալը չի գերազանցել 50 մլն դրամ (առանց ԱԱՀ-ի): 2005թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ պարզեցված հարկի մասին օրենքի նոր փոփոխությունները և լրացումները: |
| • ԱՀԿ պահանջներին համապատասխանելու նպատակով օրենսդրական դաշտում փոփոխությունների իրականացում | • ԱՀԿ-ին անդամակցելու գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը իրականացրեց գյուղատնտեսությանը տրամադրվող արտոնությունների մեխանիզմի փոփոխություն՝ փոխարինելով ԱԱՀ-ի գծով տրամադրվող արտոնությունը սուբսիդավորմամբ, ինչը համապատասխանում է իր պարտավորություններին: Հարկային արտոնության գործող մեխանիզմը կփոխարինվի գյուղատնտեսությանը տրամադրվող սուբսիդիաներով, որոնց թույլատրելի ընդհանուր ծավալը ֆիքսվել է անդամակցության բանակցությունների ընթացքում: ՀՀ կառավարությունը 2005թ. մարտին հաստատեց ԱՀԿ-ում Հայաստանի ներկայացուցչության կանոնադրությունը և ձեռնամուխ է եղել նրա կազմավորման աշխատանքներին: |
| **Մաքսային վարչարարություն** | |
| • Նոր օրենսդրության ընդունում | • 2001թ.-ին ընդունվեց նոր Մաքսային օրենսգիրքը, որը ամբողջությամբ համապատասխանում է ԱՀԿ պահանջներին: Ընդունվեցին նաև օրենսգրքի կիրարկումը ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներ: Հիշատակված փոփոխությունների հիմնական պրակտիկ ազդեցությունը մասնավոր հատվածի համար կայացավ հայտարարագրով պահանջվող փաստաթղթերի քանակի նշանակալից չափով կրճատումը: |